

Ք 99:

Ո. ՌՈՅԵՐՆԱՑԵԼՆ

# ՊԵՌԾ

## ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐԵԿԱ



Ի՞նչ է ՀԱՎԱՔԱԿԱՆ

ԹԱՅՄԱՆԱԳԻՐԸ

№ 40

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԵԱ/  
ՏԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀԱՄԽ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԵՆ ՏԵՍԵԼ

— յել —

Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ Ե Ն

ի. կ.

1. Ա. Լազարսկի	«Հոսանքների պայքարը համաշխարհ հային արհշարժման մեջ», (սպառված)	
2. *	«Երհմիությունների խնդիրներն ու գործելակերպը», (սպառված)	
3. Ե յ դ ո ւ ս	«Ալնարկներ Արևելքի բանվորական չարժման մասին», (սպառված)	
4. Արկ-Ա. Ա.	«Բանվածքների չարժման պատմ. Անդիմակայում, Ֆրանսիայում և Գերմանիայում», (մնացել են սակավաթիվ սրբնակներ)	
5. «Գործարկոմների և տեղկոմների ուղեցույց»	1	
6. «Աշխատանքի որենսդիրք»	15	
7. Անտոշկիմ	«Գրոֆենիոնալ չարժումն Ռուսաստանում», (մնացել են սակավաթիվ որինակներ)	
8. Սենյաշկին	«Գործարկոմների և տեղկոմների անելիքները ներկա պայքաններում»	25
9. Գուրինվիչ	«Լենինը և արհմիությունները»	50
10. Ֆարբիկանոն	«Սոցիալական ապահովագրությունը», (սպառված)	
11. Տ ե տ ե ր ի ն	«Ի՞նչ և արհմիության կանոնադրությունը»	25
12. Սպերանսկի	«Է՞՞ պետք է իմանա ամեն մի մայր»	20
13. Բիլուվսկի	«Բանվարդների և ծառայողների ապահովագրությունը հաշմանդամության դեպքում», (սպառված)	
14. «Կանոնագրություն բանվորական դրադարանի»	15	
15. Զ ե կ ի ն	«Ալնարկներ բանվորական չարժման պատմությունից»	35
16. Բ ժ. Մելիքյան	«Միփիլս»	20
17. Բ ժ. Կարսագետյան	«Մալարիա»	5
18. «Եկեղեց ինտերնացիոնալ», (սպառված)		
19. Դ ի բ ի ն ի ս	«Ի՞նչ է արհեստական արտադրության միությունը»	39



Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացի՛ք.

Ո. Ա Ռ Զ Ե Ն Ֆ Ե Լ Դ

# Ի՞նչ է ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Թարգմ. գ. Ա. Ա-ՏԵՐԵՎԻՆԻ

ՊՐԱԿ X



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՑՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ № 40



878 - 1492

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեալ 436 ր.

Գառովեր 2297

Տերած 1 500

## Ի՞նչ ե ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻ- Աշխատավարձի հարցերը, այլ  
ՑԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒ- կերպ ասած—տարիՓային քաղաքա-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՊԻ ՊԱՅՄԱՆ- կանությունը բնականաբար չատ մեծ  
ՆԵՐՈՒՄ տեղ և բռնում մեր արհմիություն-  
ների աշխատանքում։ Այն սերտ կա-  
պի ժամանակ, վոր գոյություն ունի միությունների և ԽՍՀՄ ժո-  
ղովրդական տնտեսության միջև, նոր տնտեսական ֆազաքակա-  
նության շնորհիվ առաջացած մեր տնտեսական կտրուկ դարձը չեր  
կարող նույնեան ել կտրուկ դարձ շառաջացնել միությունների  
տարիփային աշխատանքի մեջ։

Սակայն այդ բեկումը միանգամից տեղի չունեցավ։ 1921 թ.  
նոր տնտեսական քաղաքականությունը դեռ նոր եր բարգավաճում։  
Այլ ժամանակ ձեռնարկությունները դեռ տնտեսական հաշվին չե-  
յին անցել։ Նրանք, ճիշտ ե, մեծ ինքնուրույնություն ստացան,  
բայց իրենց բոլոր ապրանքները դեռ չուկայում վաճառել չեն կա-  
րող։ Նրանք պետք ե իրենց բոլոր ապրանքները հանձնեն պետու-  
թյանը, վոր նրանց հետ հաշվի և տեսնում, աշխատավարձի հա-  
մար նրանց հաստատում դումար և տալիս, այլ կերպ ասած—«աշ-  
խատավարձի Փոնդ»։ Բնդ սմբին արդեն 1921 թ. արհմիություննե-  
րը փորձում են առանց բացառության բոլոր բանվորներին «փայ»  
մատակարարելուց, նրանց «սոցիալական ապահովությունից»  
անցնել այն բանվորներին և ծառայողներին խրախուսելու սիստե-  
մին, վորոնք աշխատանքի բարձր արտադրողականություն կը  
դարպացնեն։ Զետնարկություններում մոցվում ե բյուջետագոր-  
ծային սիստեմը։ Նրա ելքությունն այս ե։

Յենթագրենք, չուտի գործարանը 1000 բանվոր ունի և մեկ ա-  
միս ե աշխատում։ Բայտ իր արտադրական ծրագրի, նա պետք ե այդ  
գեղքում 100,000 տոսկակ բաց թողնի։ Յեթի ջուտի գործարանի

ամեն մի բանվոր միջին հաշվով 20 ռ. և ստանում\*) , ապա ամբողջ ձեռնարկությանը (1000 մարդ) աշխատավարձի համար 20,000 ռ. և հասնում : Յենթագրենք, վոր գործարանը հատուկ ճշտապահությամբ աշխատեց և 150,000 տոպրակ պատրաստեց : Այն ժամանակ նա ստանում և ամիսը վոչ թե 20,000 վոսկի ոռորդի, այլ 30 հազար ոռորդի և ամեն մի բանվորին բաժին և ընկնում մեկ ու կես անգամ ավելի շատ, այսինքն 30 ռ. : Թող աշխատանքի արտադրողականությունը ել ավելի աճեց . տոպրակա նման ամիսը 150,000 տոպրակ են արտադրում, բայց արդեն վոչ թե 1000 բանվորը, այլ միայն 500 : Ակնհայտ է նրանցից ամեն մեկին կընկնի նորից յերկու անգամ ավելի աշխատավարձ, այսինքն 60 ռ. : Նշանակում է բյուջեադային ( ճյուղետո օծելինայ ) սիստեմը շատ նման և հավաքական մատակարարմանը, նա նույնպես տանում և գեղի բանվորների թվի կրճատումը, գեղի նրանց դատումի բարձրացումը և հետեւար գեղի արտադրողականության բարձրացումը : Նա բյուջեային և կոչվում, վորովհետեւ ուշագրության են առնում գործարանի միջոցները, նրա բյուջեն, որինակ՝ հաշվվում և, վոր միջին հաշվով ամիսը 100,000 տոպրակ պատրաստելու համար ջուտի գործարանը պետք է ունենա 1000 բանվոր : Իսկ մյուս կողմից, այդ գործարքային ( օծելինայ ) սիստեմ և, այսինքն գործարանը պետք է ամիսը 100,000 տոպրակի նորմայով մշակի : Իսկ յեթե նա յերկու անգամ ավելի յէ մշակում, ապա աշխատավարձի համար յերկու անգամ ավելի մեծ գումար կստանա, յեթե ավելի քիչ պատրաստի, համապատասխան չափով նրա միջոցներն ել կը քչացնեն<sup>\*\*</sup>) :

\* ) Թվերն այստեղ մոտավոր են :

\*\*) Բյուջեադային սիստեմը մտցվեց արհմիությունների Համառուսական 4-րդ համագումարի վորոշման հիման վրա (1921 թ.) : Նա կոչվում եր նաև հավաքական մատակարարություն և հենց հավաքական մատակարարման ձեռով ել մտցվեց հիմնարկությունների համար : Բանն այն և, վոր հիմնարկությունների կատարած դիվանական աշխատանքի անմիջական հետեւանքները չե կարելի ճշգրիս հաշվառել : Զի կարելի ծառայողներին աշխատավարձ տալ, ասենք, նրանցից ամեն մեկի դրած տեղեկագրի կամ անցկացրած նիստերի թվի համաձայն :

Սակայն բյուջեամ-գործային սիստեմը, պետության միջոցների պակասության և նոր տնտեսական քաղաքականության հետազա զարգացման հետևանքով, շուտով վոչնչանում և և հավաքական պայմանագրերով ե փոխարինվում: Հավաքական պայմանագրերը յերեան են գալիս միայն այն ըրջանում, յերբ նոր տնտե-

Հիմնարկության համար սահմանվում ելին պարզապես հաստատուն շատաներ և համապատասխան ձեռվ բաց եր թողնվում աշխատավարձի Փոնդը: Ցեղե, որինակի համար, 100 ծառայողին բաց եր թողնվում 1000 ո., իսկ հետազայում նույն աշխատանքը կատարում ելին 50 ծառայող, ապա նրանցից ամեն մեկին արդեն տրվում եր վոչ թէ 10 ո., այլ 20: Այսպիսով, հավաքական մատակարարումը փոքրացնում եր փքված շտատները և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը:

Սակայն այդ բոլորի համար պահնջվում եր, վոր հիմնարկություններին ու ձեռնարկություններին նշանակալի հաստատուն գումարներ բաց թողնվելին աշխատավարձի համար: Հանրապետության պարենավորման պաշարների ծանր գրութունը հարկադրեց համառուսական 4-րդ համագումարին շատ զգույշ վերաբերվել գործային սիստեմ և հավաքական մատակարարում մտցնելուն: Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը 1921 թ. հունիսին փորձի համար 33 խոշորագույն ձեռնարկության հավաքական մատակարարումը արագ լույսացնում է — 1922 թ. փետրվարին փոխված են 97 ձեռնարկություն 489,000 բանվորով, հոկտեմբերի 1—15 հավաքական մատակարարման են փոխված խորհրդային ծառայողները:

Բանվորների այս բոլոր խմբերի համար կենտրոնում հաստատվում եր աշխատավարձի համապետական Փոնդ: Պետությունը վորոշում եր, թե պետական մատակարարման առած ձեռնարկությունների և հիմնարկությունների բանվորներին և ծառայողներին ինչքան միջոցներ կարող ե բաց թողնել: 1921 թ. վերջին պետական մատակարարման մեջ ելին 7 միլիոն մարդ (1920 թվի 35 միլիոնի հանդեպ), համապետական Փոնդն ամիսը 70 միլիոն ոռուրլի յեր: Հետեւբար միջին աշխատավարձը մարդուն մոտավորապես 10 ոռուրլի յեր: Այս միջին կոպարը հաստատվում եր կենտրոնում կենտրոնական Ֆոնդային Հանձնաժողովի կողմից ՀԱՄԿԸ մասնակցությամբ և տարածում եր ամբողջ Խորհրդային Ռուսաստանի վրա:

սական քաղաքականությունը վերջնականապես զարգացավ ու հասունացավ—1921 թ. վերջին և 1922 թ. սկզբին։ Ուստաստանի ժողովական տնտեսությունը պետական կապիտալիզմի ձև ընդունեց պրոլետարիատի դիկտուրայի պայմաններում։ Պետական

Իսկ կենտրոնում հաստատվում էն այդ միջին կոպարի մի քանի վարիանտ, որը կախված էն աշխատանքի կատեգորիացից, տեղից և այլն։ Որինակ՝ ածուխի և նավթի ամենակարեվոր արդյունաբերության բանվորների առաջին խմբակի բանվորների համար—11 ու 50 կ., յերկրորդ խմբակի—համարյան ամբողջ մետաղագործական արդյունաբերության համար—11 ոռորդի, յերրորդի՝ մանաժագործականի համար—10 ու, չորրորդի՝ խորհրդային աշխատավորների և նմանների համար—8 ոռորդի և այլն։

Այս կոպարները փոխվում են ըստ տարիֆային գոտու, այսինքն ըստ տեղի, ուր գտնվում է ձեռնարկությունը։ Ասենք, Մոսկվայում, վորտեղ մթերքների գինը թանկ և, մետաղագործ բանվորը 11 ու յետուանում, իսկ գավառում, որինակ, Ռեեսսայում—միայն 10 ու, վորովհետեւ նրեսսան գտնվում են յերկրորդ գոտում։ Զինովյեվոկուում—ել ավելի քիչ (ըստ յերրորդ գոտու)։ Այլն։

Այս բոլոր հաշիվները, սակայն միշտ չարգարացան, փոնդերը միշտ բավարար չափով չեյլին հասնում նահանգ և ձեռնարկություն։ Առաջիւ պես տարիֆային աշխատանքը չափից կուրս վերկից եր վարվում։

Բացի այդ, աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության միջև անհրաժեշտ համապատասխանություն չկար։ Յեթե բանվորը բարձրացնում եր իր արտադրողականությունը, ապա նրան ստանալիքի ժամանակ իրոք շատ փող եյլին տալիս, բայց բանն այն և, զոր ամբողջ 1921 թ. ընթացքում բանվորի աշխատավարձի դրամական մասը կազմում եր վոչ ավելի 19,8 տոկոս, իսկ գատումի 86,9 տոկոսը նրան բնարկյունքով եյլին տալիս—պարժողկոմի վայի, արտադրական հագուստի, ծրի կոմմունալ ծառայությունների ձեռվ և այլն և այդ բոլոր բնարդյունք վճարումները վոչ մի կազ չունեյին աշխատանքի արտադրողականության հետ։ Նույնիսկ 1922 թ. կիսին գտնութիւնը բնաբդյունք մասը գեռ 55 տոկոս եր կազմում, այսինքն կեսից ավելին։

արդյունաբերության մեծ մասը շարունակ ավելի յէ անցնում տնտեսական հաշվի և արեսաներ ու սինդիկատներ կազմելով, իր արդյունքների մեծ մասը վաճառահանում է աղաս շուկայում, իսկ պետությունն իրեն պահում է միայն տնտեսության ընդհանուր պլանի մշակումը, արդյունաբերության և առևտրի հսկողությունը և նրանց կարգավորումը: Միաժամանակ զարգանում է մանր և մասամբ միջակ մասնավոր-վարձակալական արդյունաբերությունը:

Ամեն մի տնտեսավար նոր տնտեսական քաղաքականության ժամանակ շատ ավելի մեծ պատասխանատվություն է կրում իր ձեռնարկության համար, քան առաջ, իսկ մյուս կողմից՝ ՆԵՊ-ի պայմաններում ձեռնարկության վարումը, յերբ ամեն մի վարչական անձի ու տնորենի (գիրեկտոր) հարգվածում է հարեւան տընտեսական որդանի, ինչպես և մասնավոր կապիտալի մրցությունը, փոքր դժվարություն չի ներկայացնում:

Վատելիքը, հում նյութը ավելի եժան ձեռք բերելու, արտադրությունը լավ կարգի դցելու, ինչպես հարկն և շուկայի կարիք-ները հաշվառելու, հարկավոր վորակի ապրանքը ժամանակին բաց թողնելու համար պետք է ճկուն, նախաձեռնող, նույնպես և միանձնյա լինել ձեռնարկության կառավարման մեջ: Այդ պատճառով ձեռնարկության տնորենն արդեն աշխատավարձի հաշված ֆոնդը կենտրոնից չի ստանում, այլ իր առևտրային միջոցներով ինքն և կազմում այն (բարձրագույն տնտեսական մարմինները միայն կարգավորում են այդ ֆոնդը և միայն կենտրոնացրած պետական արդյունաբերության մեջ և, վոր առաջվա պես ֆոնդը կենտրոնից և ստացվում): Սրա կողքին տնորենը պետք է ունենանա մեծ ապատություն այդ ֆոնդի բաշխման մեջ: Յեթե առաջ այդ գործով զբաղվում եր միայն ՀԱՄԿԽ, վոր միությունների հետ միատեղ հաստատում եր հարկադրական համապետական տարիքներ, ապա այժմ տնտեսական որդանն ինքն և հաշվում, թե ինչքան կարող ե բաժին հանել իր ձեռնարկության բանվորների աշխատավարձին, նույնպես և միության մասնակցությամբ բանվորներին կարդի բաժանում ըստ իրենց վորակի:

Ի՞նչ են այն ժամանակ միության խնդիրները: Միությունը պետք է հետևե, արդյոք նի՞շ և հաշվել իր միջոցները տնտեսական որդանը, արդյոք նա մյուս կողմը չի թեքվել և հետամուտ ձեռնարկության վաստակարերությանը, արդյոք այդ պատճառով շատ չի պակասեցրել աշխատավարձի ֆոնդը: Նոր տնտեսական քաղաքա-

կանության բարգ պայմաններում աշխատավարձի հարցերուն «վերևից» պարզապես հրամայելը անտեսական որդաններին վոչ միայն ոգուտ չի բերի, այլ ընդհակառակը, կը կապի անտեսավարի ձեռքն ու վոտը: Բացի այդ, վերևից անկարելի յե ուղիղ հաշվառել և գնահատել զանազան վայրերի արդյունաբերության ամեն մի ճյուղի աշխատանքի զանազանակերպ առանձնահատկությունները, նույնպես և առանձին ձեռնարկությունների առանձնահատկությունները: Այդ պատճառով արհեստակցական միությունները աշխատանքը պետական նորմայի յենթարկելու և ՀԱՄԿի պարտագիր վորոշումների միջոցով, աշխատավարձի հարցերը միակողմանի վճռելուց անցնում են իրենց անդամների նյութական շահերի պաշտպանությանը համաձայնությունների, այլ կերպ ասած, տնտեսական որգանների հետ հավաքական պայմանագրեր կնեխելու միջոցով:

Տվյալ գեպքում տնտեսական որդանների խնդիրն այն է, վորութիղ հաշվառեն իրենց միջոցները, պատրաստակամ լինեն դրանց հիման վրա ամեն կերպ աջակցել բանվորների նյութական դրության լավացմանը և պայմանագիր կնքելով, մահուգի տակ չթաքցընեն այն իրեն անգետափ իր, այլ բարեխղճորեն կատարեն համաձայնության բոլոր պայմանները: Իսկ արհմիությունները հավաքական պայմանագրեր կնքելու կովում և նրա միջոցով իրենց անդամների աշխատավարձը բարձրացնելիս պետք է շարունակ խնամքով սոսուգեն, թե իրենց պահանջները ինչքան են համապատասխանում արդյունաբերության ավյալ ճյուղի ուժերին և ԿՄՀՄ ամրող ժողովրդական տնտեսության ուժերին ամրողությամբ առաջարկում: Եթի խոսքով, արհմիությունն ամեն կերպ հոգում և այն մասին, վորպեսի «արոլեստարիատի», իրեն ամբողջ քասակարգի, շահերի «տեղական անընդհատ ամրացումը և անումը: Մի խոսքով, արհմիությունն ամեն կերպ հոգում և այն մասին, վորպեսի «արոլեստարիատի», իրեն ամբողջ քասակարգի, շահերի» տեղ չը գրվեն «տվյալ արդյունաբերության բանվորների շահերը (ըստ վորում սխալ հասկացված), տվյալ միության շահերը» (М. Томский: — „Профessionaльные Союзы на новых путях“):

ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉՈՐԻ ՍԿՄԵ— Սակայն նախ քան միությունների  
ՑԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ— տարիքային աշխատանքի հետագա  
ՆԱԳԻՐԵՐ ԳՈՐԾԱԴԻՐԵԼ ուսումնասիրության անցնելը, ան-  
հրաժեշտ և վճռել այն հարցը, թե  
ինչպես ծաղեց և աստիճանաբար զարգացավ հավաքական պայ-  
մանադիրը և ի՞նչ բան է նա:

Արինակ՝ ճորտական իրավունքի շրջանում Ռուսաստանում  
տնտեսատերի և նրա ստրուկի—աշխատավորի միջև վոչ մի պայ-  
մանագիր դոյլություն չուներ: Կարվածատերը անվերապահորեն  
տնօրինում եր դյուղացու ժամանակը, ուժերն ու նույնիսկ կյան-  
քը: Այդ բանում նրան ամեն կերպ ոգնում եր պետությունը, այ-  
սինքն հենց նույն ֆեռովալ-կալվածատեր դասակարգի իշխանու-  
թյունը: Արեմուտքում ճորտական իրավունքը հարյուր, իսկ տեղ-  
տեղ ել (որինակ՝ Անդրայում) մի քանի հարյուր տարի ավելի  
չուս խորտակվեց, քան Ռուսաստանում: Ակեղք եր առնում կապի-  
տալիզմը, աճում եյին քաղաքներն անձնական ստրկություն չիմա-  
ցող արհեստավորների ուժեղ զասակարգով: Արհեստավորն իր  
դործի համար ոգավում եր աշակերտ, վարպետացուի ծառայու-  
թյուններով: Բայց միջին դարերի սկզբում գեռ խիստ զանազանու-  
թյուն ու թշնամություն չկար տնտեսատերի ու վարպետացուի  
միջև: Արհեստավորի փոքրիկ տնտեսության մեջ, վոր աշխա-  
տում եր վոչ թե շուկայի, վոչ թե վաճառելու համար, այլ պատ-  
վերով, կարծեք թե բոլորը մի ընաւնիքի անդամ եյին, բոլորը  
միակերպ ծանր աշխատանք եյին կատարում: Զեւնարկուների գա-  
սակարգը գեռ չեր կարողացել կարուկ կերպով անջատվել բանվոր-  
ների գասակարգից, գասակարգային թշնամությունը գեռ սաղմա-  
յին վիճակում եր: Այդ պատճառով առաջիկ պես հատուկ պարմա-  
նագիր չկա տնտեսատերի և վարպետացուի միջև:

Արհեստավորների ամեն մի միացում՝ ամեն մի համքարու-  
թյուն (որինակ՝ հյուսների, հացագործների, գերձակների և այ-  
լըն) իր խիստ կանոններն ուներ, թե ամեն մի արհեստավորի ինչ-  
քան աշակերտ և վարպետացու պետք ե ընկներ, թե նա ինչպես  
պետք ե վարչեր նրանց հետ, ինչ վորակի պետք ե լինելին նրա  
պատրաստած իրերը, ինչ դնով պետք ե ծախեր, ինչքան վաստակ  
իրավունք ուներ ստանալ, ինչ քննությունների պիտի յենթարկ-  
վեր վարպետացուն, վորակեալի վարպետ գառնար և այլն: Այդ  
համքարային կանոնները առավելապես նպատակ ունելին ապահո-  
վել համքարության (գիլդիա, կորպորացիա) անդամների շահե-

րը, պաշտպանել նրանց մքությունից : Բացի այդ, միջնադարյան պետությունը հաստատելով այդ կանոնները, հոգում եր պատվեր ովող սպառողների շահերի մասին : Այնուամենայնիվ այդ կանոնները կազմելու և հաստատելու մեջ աշկերտներն ու վարպետացուները մասակցություն չունենին :

Այնուամենայնիվ այդ կանոնների ճնշումը յերեաց այն ժամանակ, յերբ հասունացավ առեւրային կապիտալիզմը, յերբ վարպետը վաճառական-ձեռնարկու գարձավ, իսկ վարպետացուները՝ վարձու բանվոր : Առաջվա «ընտանեկան» կարգերից հետք իւ չմը բնաց : Առաջվա պես հենվելով գոստիկանական պետության բարյացակամ աջակցությունը, վորի մեջ շարունակաբար քիշ-քիչ ուժեղանում և գրամական մեծամէծների, յերիտասարդ բուրժուազիայի ազդեցությունը, վարպետ-վաճառականները ոգտվում են համբարային կանոններով, վորպեսզի քերթեն վարպետացուների կաշին : Վարպետացուները կատաղի կոփի են սկսում տնտեսատերերի դեմ, պահանջում են պայմանագիր կնքել, վորի մեջ ճշգրիտ նշվեն նրանց աշխատանքի պայմանները, և կազմակիրպում են իրենց ընկերությունները, արհեստային ակումբները : Սակայն ցըրիվ յեկած ու բաժան-բաժան վարպետացուները անզոր են ամենակարող պետության առաջ, վոր ծնվող բուրժուազիային առավելության և սպասակալության տակ : Բուրժուազիան աճում եր, ամբանում, մեքենաների, նշանակում և նաև ֆաբրիկաների և գործարանների յերեան զալը նրան բավականին ուժ ուղեց և նա վերջապես վճռեց, վոր բանվորների հետ գոտեմարտելիս հիանալի կարող և գլուխ հանել նաև առանց պետության ողնության : Ընդհակառակը, նույնինիվ մի շարք դեպքերում պետության միջնորդությունը խանգարում եր բուրժուազիային ազատութեն շահվել — համբարային կանոնները, ինչքան վոր նրանք հաճախ ճնշող ելին բանվորների համար, այնուամենայնիվ գոնե մասամբ սահմանափակում ելին շահադործողների, գործարանատերերի : Փարբեկանուների քմահաճույքը : Անդիմական միությունները (քաղաքային արհեստավորների ակումբները) այդ պատճառով յեռանդով ձգտում են այն բանին, վոր առաջվա պես պետությունն անմիջականորեն խառնվի աշխատանքի և կապիտալի հարաբերություններին, հաստատի աշխատավարձի մինչեմումը, բանվորական որվա յերկարությունը և այլն : Այնուամենայնիվ այդ գոնե այս կամ այն ձեռով աշխատանքի պաշտպանությունը եր : Սակայն բուրժուազիան արագորեն յերկրոպական յերկրների քաղաքական

կյանքում ել այնպիսի գերակշիռ ազդեցություն ձեռք բերեց , ինչ-  
պես ժողովրդական տնտեսության մեջ : Նա հայտարարում է «ա-  
զատություն , հավասարություն և յեղբայրություն» «արդարացի  
և սրբազն» լոգունգները և այդ հիման վրա վերացնում և ամեն մի  
համքարային կանոն (Ֆրանսիայում 18-րդ դարի վերջին , Անգլիա-  
յում—1814 թ . և այն) : «Աշխատանքը պետք և աղաս լինի» , —  
կեղծավորությամբ հայտարարում ե բուրժուատն , —«բանվորն ա-  
զատ և վարձիկ կամ չվարձիկ ձեռնարկուի մոտ» :

Սակայն ըստ եյության այդ «աղաստությունը» բացի իր ձեռ-  
քերից , վոչինչ չունեցող բանվորի համար նշանակում եր քաղցից  
միունքու աղաստություն և վերջնականապես ուժաթափ եր անում  
նրան ամենակարող կապիտալիստի առաջ :

ԿՌԻՎ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱԲԱ-  
ԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
Նշանակալի մասսաներով միա-  
ցած բանվորները ձեռնարկություն-  
ների մեջ չուտով հասկացան , թե  
ինչքան անձեռնոու յե նրանց մեկ-մեկ հանդեռ գալ ձեռնարկու-  
ների դեմ և ընդհանուակը , ինչքան նրանց կափը հաջող կը լինի ,  
յեթե նրանք միացնեն իրենց ուժերը : Այդ պատճառով կապիտա-  
լիզմի սկզբնավորության և անման շրջանը միաժամանակ հանդի-  
սանում ե արհեստակցական ընկերությունների և միությունների  
ոկզրնակորուրյան և անման շրջան :

Սակայն բուրժուազիան միանդամից զգաց , թե ինչ վատանգ և  
սովորնում նրան բանվորների այդ միասեղ կոփը հանուն բանվո-  
րական պարմանադրի (իսկ հետադայում հանուն հավաքական պայ-  
մանագրի) :

Նա հարձակվում է այդ յերիտասարդ ընկերությունների  
վրա իր բոլոր փուշ ու տատառակով : Ամենից առաջ սկսեցին 1789 թ .  
ֆրանսիական հեղափոխության «մեծ» դործիչները , վորոնք 1761  
թվի Շատիլիկի որենքով արգելեցին բանվորների ինչպես ժամա-  
նակավոր համաձայնությունները , այսպես ել միենույն արհեստի  
բանվորների միությունները : Նրանք թագնվում եյին , ի հարկե ,  
գարձյալ ընդհանուր «աղաստության և հավասարության» դիմակի  
տակ և հայտարարում եյին , վոր «պետության մեջ այլևս համքա-  
րություններ չկան , միայն ամեն մի առանձին քաղաքացու անձ-  
նական շահերը և բոլոր քաղաքացիների հասարակական շահերը  
կան : Վոչ վոքի չպետք է թույլ տալ , վոր քաղաքացիներին ելի մեկ  
կողմակի շահ ներշնչելու միջոցով նրանց ընդհանուր դործից հե-

ուացնի և նրանց մեջ համբարային (կորպորատիվ) վոգի հարուցի» : Բայց յեթե այսուամենայնիվ ձեռնարկուները ցանկանային «ընդ-համուր գործից հեռանալ», վորպեսզի համաձայնության գալով և ձեռնարկուների միություն ստեղծելով ելի մի քիչ խեղդեն բանվորներին, ապա ներողամիտ որենքը (վոր հենց նույն ձեռնարկուների կողմումն եր) նրանց թեթև դրամական տուգանքով եր պատժում : Դրա փոխարեն բանվորներին, վորոնք միություններ եյին կազմում արդարացի կերպով իրենց պաշտպանելու անխիղճ շահագործումից, Շապելինյի որենքը պատժում եր յերկարատև բանարկությունով :

Նույն եր դրությունը նաև Անդլիայում, վորտեղ «համբարային կանոնների» փաստական վերացման հետ միաժամանակ պետությունը նոր որենքներ մտցրեց բանվորների արհեստակցական միությունների գեմ՝ այլպես և ուրիշ շատ յերկրներում :

Այդ պատճառով լիովին հասկանալի յե, վոր հավաքական պայմանագրի պատմությունը նույն արհեստակցական, ապա և ամբողջ բանվորների շարժման պատմությունն է : Միայն բանվորների ուժեղ, հաստատուն միությունները կարող եյին հարկադրել ձեռնարկուներին իրենց հաշվի առնել և պայմանագրերի ձեռով ձեռնարկուներից ավելի կամ պակաս ժամանակով աշխատանքի լավագույն պայմաններ կորցել իրենց անդամների համար : Անգլիայում 50-ական թվականները, հավաքական պայմանագրերի յերեան զալու շրջանը, միաժամանակ ծննդի շրջանն են այսպես կոչված «հին տիպի» հզոր տրեգյունիոնների, ինչպիս «Մեքենաշինարարների միացյալ ամալգամյալ ընկերությունը», վոր ձեռնարկուների գեմ մզած կատաղի յեռամյա գործադուլային կովում կոփեց իր ուժերը : Գերմանիայում հավաքական պայմանագրերի սաղմերին մենք հանդիպում ենք գեռ. 1875 թ. տպաղբեշների համագերմանական տարիքի ձեռով : Սակայն այդ աշխատանքը լայնորեն զարգանում և միայն «սոցիալիստաների գեմ ուղղված որենքի» վերացումից հետո, 90-ական թվականներին, արհշարժման սրընթաց վերելքի շրջանում : 1907 թ. այստեղ 5,324 հավաքական պայմանագրի ընդգրկում էյին 111,050 ձեռնարկություն 974,504 բանվորներով, 1913 թ. վերջին—13,446 պայմանագիր ընդգրկում են 218,033 ձեռնարկություն 2,072,450 բանվորով, իսկ պատերազմից հետո ել ավելի շատ — 1919 թ.—12,79 պայմանագրի ընդգրկում են 321,349 ձեռնարկություն, 9,381,427 բանվորով : Ֆրանչիայում նույնպես հավաքական պայմանագրերը լայնորեն տարածվում են 20-րդ դարի

առաջին տասնամյակի արշարժման հզոր աճման հետ միաժամանակ : 1910 թ . արդեն 252 հավաքական պայմանագիր եր կնքված , ընդ վարում նրանցից 144 , այսինքն կեսից ավելին , նախորդող գործադրությին հետևանքն ելին հանդիսանում : Ընդհանրապես գործադրությին շարժումը , միացած բանվոր մասսաների այդ սուաջին հարվածները կապիտալիզմի ամրացներին , նախորդում է հավաքականին պայմանագրերի յերեան գալուն զրեքե ավելի մեծ չափով . բայց հենց արհմիուրյունների յերեան գալուն :

Զեռնարկութին (վորի թիկունքին, բացի իր փողի տոպրակից, կանգնած եր վոստիկանական պետության ամբողջ ազդու մեքենան) միշտ ոգտակար և գործ ունենալ հենց առանձին, անփորձ, հաճախ քիչ գրադեստ կամ բոլորովին անդրագետ բանվորի հետ, վորը բացի այդ, վախից զրդված շտապում և, թե նրա տեղը կարող է բռնել գործազուրկների տհագին «պահեստի բանակի» վորեւ անդամ : Զեռնարկուն հմտորեն ոգտագործում և բանվորների միջև յեղած այլ մրցությունը և բաժանումը և յեռապատիկ շահվում և դրանից : Բալորավին այլ պատերը և ստացվում, յերբ ձեռնարկուն ընդհարվում և հզոր, աշխատանքի չուկայի և արտադրության կացությանը հիմնալի իրազեկ համախմբված բանվորական կազմակերպության հետ : Զեռնարկուն կատագի ընդգիմանում և : Դաշտան գործադուրներով, թիգ առ թիգ արհմիությունները խլում են նրանից գերբերը հափաքական պայմանագրերի կնքման արշալույսին : Միշտ շարք գործադուրներ են արդում նույնիսկ վոչ թե նրա համար, զար աշխատավարձը բարձրացվի կամ բանվորական որը կրծատվի, այլ բացառապիս ձեռնարկուին հավաքական պայմանագիրն ստորագրել հարկադրելու նպաստակով : Իրոք, յեթե հափաքական պայմանագիրը չկա, ձեռնարկուն իրեն դրության տերն և զգում :

— Այսուր ստացիր որպական հիսուն կոպեկ, իսկ վազը, յեթե խելքիս վէչեց, քեզ 25 կոպեկ կտամ, իսկ յեթե ուզեմ—20 կոպեկ կավելացնեմ:

Ապա ըստ իր քմահանույքի առանձին բանվորների աշխատավարձը փոխելով, ստեղծելով «սիրելիներ» և «խորթ զավակներ», տնտեսատերը ճարպիկորեն պատակաւում է մացնում բանվորների միջև: Իհարկե, գոչ մի նման բան չի կարող լինել, յեթե ձեռնարկության բանվորները իրենց միության զեկավարությամբ հավաքականորեն, այսինքն միատեղ հարկադրում են ձեռնարկության պայմանագիր կնքել և բործապուլի կամ բոյկոտի սպառնալիքով դրդում են նրան կատարել իրեն տաելի արդ պայմանագիրը: Հա-

վաքական պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելով, կապիտալիստը մի անգամ ից յերկու նապաստակ և սպանում, մի կողմից՝ իր վարձու ստրուկների վրա անսահման իշխանություն և պահում իսկ յուս կողմից, հարված և հասցնում բանվորների միացման ամբողջ աշխատանքին, նրանց արհեստակցական միություններին։ Այդ պատճառով կապիտալիստական յերկրներում հավաքական պայմանագրի համար մզգող կոփիլը բարեյության նշանակալի շափով ավելի լայն և, քան այդ թվում և։ Այդ լայն բանվոր մասսաների պլանաչափ հարձակումն և կապիտալիստների վրա՝ դասակարգային կոմիտեներում սկզբնական դիրքերը նվաճելու, իսկ հետո արդեն հետագա առաջխաղացությունն սկսելու համար։ Ամուր արհեստակցական միությունները ապահովում են հավաքական պայմանագրի կոմիտե հաջողությունը և, ընդհակառակը, հավաքական պայմանագիր կնքելու կոմիտեի հիշտ հասկացած կամպանիան ամրացնում և արհեստակցական կազմակերպությունների։

ՀԱՎԱՔՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱ-  
ԴԻՐ ՑԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ :

Ճպրկիս և ուղիղ ձեռվ և վորոշում, թէ ի՞նչ և հայտաբական պատմանագիրը.

«15. Հագախական պայմանագիրը մի համաձայնությունի է, վոր կենում և արկեստակցական միությունը, իբրև բանվորների և ծառայողների ներկայացուցիչ, մի կողմից և վարձողը, մյուս կողմից, վորը սահմանում է աշխատանքի և վարձման պայմանները առանձին ձեռնարկությունների, եթևարկությունների և տնտեսատերերի կամ նրանց խմբակների համար և վորոշում և ազգագու անձնական (աշխատանքային) վարձման պայմանագրի բովանդակությունը»:

Բ՞նչ և նշանակում այս : Յենթաղբենք բանվոր թոժայանը կործարան յեկայի ու մտավ մեխանիկական բաժանմունքը իր համարակազործ (տօքար) 30 ո . ոռճիկով : Մենք ասում ենք, վայ նոս վարձման անձնական պայմանագիր և կնքել զործարանի վարչության հետ : Հետո ել, ասենք, մեխաղադործների միությունը հավաքական պայմանագիր կնքեց նույն զործարանային վարչության հետ : Այդ հավաքական պայմանագրում ասվում է, վայ համարակազործները Տ-րդ կարգում են և ստանում են 32 ո . թոժայանը

նույնպես 32 ռ. կտանա , բայց այդ ամենեւին չի նշանակում , թե հավաքական պայմանագիրը հետամտում է այն նպատակը , վոր հենց բանվոր թոմասյանը ամփոր 32 ռ. ստանա : Թոմասյանը կարող է արձակվել , նրա տեղը կարող է վարձվիլ Մանուկյանը , Սարոյանը , Սարգսյանը և այլն՝ այլ միենույն է , հավաքական պայմանագիրը «վորոշում է ապագա անձնական վարձման պայմանների բովանդակությունը» , այսինքն սահմանում է , թե ամեն մի բանվոր , վոր այժմ աշխատում է կամ ապագայում կաշխատի գործարանում մեխանիքական բաժանմունքում ճախարակազորքի պաշտոնով , անպայման պետք է վարձատրի 32 ռ. :

Բայց , իհարկե , հավաքական պայմանագրի ոգուտները վայելելու համար , նախ անպայման պետք է հենց այդ ճախարակազորքը դառնալ , այսինքն գործարան մանել իրեն բանվոր , անձնական աշխատանիքային պայմանագիր կիմել : Յեթե բանվորն արձակվում է , ապա նրա անձնական աշխատանիքային պայմանագիրը կորցնում է ուժը , իսկ հավաքական պայմանագիրը դրանից չի տուժում : Նա տարածվում է նաև ամեն մի բանվորի վրա , վոր նոր և մանում դորժարան :

Այսուեղ պետք է գետ նշել , վոր վարձման պայմանագիրը անձամբ իմքը բանվորն է կիմում . իսկ հավաքական պայմանագիրը՝ անպայման . արիմիությունը<sup>8)</sup> :

Իսկ ուժ հետ կարող է հավաքական պայմանագիր կնքել արհմիությունը : Թույլ զարգացած արդյունաբերության յերկրներում տարածված են «Փերմային» պայմանագրերը , վոր առանձին Փերման , ձեռնարկուն կնքում է նույն ձեռնարկության բանվորական կազմակերպության հետ : Հավաքական պայմանագրերի ամենահաջացած տեսակն է այդ : Կազմականիցի և բանվորական շարժման տնօրման հետ միասին , ձեռնարկությունների միությունների հետ

<sup>8)</sup> Հատուկ այլատեսակություն են այն աշխատանիքային պայմանագրերը , վոր կնքվում են գյուղում գյուղատնտեսական բանվորների—բարերակների , հավիմների և ուրիշների համար : Ի գանազանություն հավաքական պայմանագրի , այդ տեսակ պայմանագիրը կնքվում է համախ մի բանվորի համար : Բայց պայմանագիրը վոչ թե ինքը բանվորն է կնքում , այլ Հողանոտամիությունը : Աշխատանիքային պայմանագիր կոչելով նա փառապես տարիիքային համաձայնություն և հանդիսանում մեկ հատիկ բանվորի համար :

հանդես ե գալիս բանվորների հզոր միությունը, վոր արդյունաբերության միևնույն ճյուղի բոլոր ձեռնարկությունները միացնում է : Յեթե այդ միությունները միայն մի քաղաք կամ շրջան են ընդգրկում, որինակի համար, յեթե Զոլինգեն (Գերմանիա) քաղաքի մետաղագործները հավաքական պայմանագիր են կնքում նույն քաղաքի մետաղագործական գործարանների և մետաղագործության ձեռնարկության ձեռնարկությունների տերերի միության հետ, ապա այդպիսի պայմանագիրը կոչվում է տեղական կամ լոկալ : Հավաքական պայմանագրերի արդ տեսակը տարածված է Գերմանիայում, մասամբ ել Ֆրանկֆուրտում : Վերջապես լայնորեն զարդացում արդյունաբերության յերկրներում, վորտեղ կան ձեռնարկուների հսկայական միություններ և գորտեղ, բացի արդ, արհեստական միությունները այնքան են ամբացել, վոր չեն վախենում հավաքական պայմանագրերի կոփվը համապետական մասշտարով վարելուց, այնուեղ սովորաբար կիրարկում և զլիավար կամ ազգային հավաքական պայմանագիրը : Որինակ կարող է ծառայել մանածագործների համասնկլիական ֆեդերացիայի պայմանագիրը, մանածագործական արդյունաբերության ձեռնարկուների համանգլիական միության հետ : Գլխավոր հավաքական պայմանագիրն ամենից ավելի տարածված է Անգլիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում :

Գլխավոր պայմանագիրը, վոր միանկամից ընդգրկում և բանվորների ահատին կազմակերպված մասսաներ, նրանց համար մեծ ոգուառ ունի : Այսպես, որինակ, 1921 թ. նույն Անգլիայում ձեռնարկուները հարձակում պատրաստելով ածխահատ բանկուների վրա, ձգուում ելին մի քանի ուայններում յերկարացնել, ճյուղներում կրծատել հավաքական պայմանագրերի ժամկետները այն հաշվով, վոր նրանք զանազան ժամանակներում վերջանան : Զանքափորերի միությունը մասերի կը բաժանվեր ամբողջ Անգլիայի միացած «ածուխի թագավորների» կողմից : Միությունն ստիպված եր ամեն ջանք թափել, վարպեսզի թույլ չտա կասպիտալիստների այդպիսի խաղը և ձգտի առաջկա պիս զլիավար հավաքական պայմանագիրը կնքին Քնոդհանիայի կիրարաբարության մեջ, կազմակերպված և համախմբված, 1908—1910 թ. կատարի գիմադրություն ցույց տվեցին գերմանական ձեռնարկուներին զվորոնք ցանկանում ելին համակայսերական համագումարի ավելի քիչ են կազմակերպված և համախմբված, 1908—1910 թ. կատարի գիմադրություն ցույց տվեցին գերմանական ձեռնարկուներին զվորոնք ցանկանում ելին համակայսերական համագումարի ավելի քիչ են կատարի բանկուների համար ավելի հեշտ երկովել կապիտալիստների առանձին ջոկատ-

ների գեմ, քան ձեռնորկուների հզոր միության գեմ, վորի համար գլխավոր հավաքական պայմանագիրը կնքելիս հեշտ եր կառուց ցողների միությանը հաղթել: Գլխավոր հավաքական պայմանագրի ժամանակ ընդհարման թափը շատ մեծ է և բանվորները այդ դրույթ են.—որինակ՝ անդիմական մանածագործների ֆեղերացիան գըլ-խավոր պայմանագիր կնքելուն ընդառաջնեց միայն այն ժամանակ, յերբնա իր մեջ ուժ գցաց, վոր հարկ յեղած դեպքում կարող եղացը ծագուել հայտարարել և հաջողությամբ առաջ տանել այն ամրող Անդիմայում՝ իր միացրած ձեռնարկությունների մեջ:

Ճիշտ ե, դիմավոր հավաքական պայմանագիրը վորոշ անհարմարություններ ել ունի, սահմաննելով աշխատանքի պայմաններ (աշխատավարձ, բանվորական որ, վորակավորում և այլն) մի ամբողջ հսկա յերկրի համար, նա չի կարող, ինչպես հարկն ե, հաշվառել բոլոր յուրահասուել տեղական պայմանները առանձին ըրջաններում կամ քաղաքներում: Կարող ե այնպես պատահել, վոր հավաքական պայմանագիրն ամբողջ յերկրի համար մետաղագործի դասումը 25% բարձրացնի, իսկ առանձին քաղաքների համար 5—10 ցածացնի: Այդ պատճառով գլխավոր պայմանագրերի հետ միասին միությունները սովորաբար կնքում են նաև տեղական հավաքական պայմանագրեր, վորով ամենից ավելի լույն են ապահովում բանվորի շահերը:

Մեզ մոտ, Խորհրդային մուսասամանում, հավաքական պայմանագրերը նույնակես բաժանվում են տեղականի (լոկալի) և գըլխավորի: Այսպես, որինակ, Ռեկրայնայի վորեն նահանդական քաղաքի մի փոքրիկ կոնսերվի գործարան ընդգրկվում և Սննդարեսաբի տեղական հավաքական այն պայմանագրով, վոր նա կնքել և Սննդարձների Միության Նահանդական Բաժանմունքի հետ: Նույն քաղաքի խոշոր պետական ծխախոսային գործարանն արգելն ովտիվում ե այն հավաքական պայմանագրով, վոր համառւկրայնական մասնաշտարով կնքած և Խարկովում Ռեկրայնական Ծխախոսատրեսի և Սննդարձների Միության Աննադական Վարչության միջն: Վերջապես յերկաթուղարքներն այդ քաղաքում աշխատում են համաձայն համամիութեական հավաքական պայմանագրի, վորը կնքած և Մոսկվայում ձևասպառների Հաղորդակցության ժողովրդական Կոմիտարիանեւ և Յերկաթուղարքների Միության կենտրոնական Կոմիտեի միջն:

Ի հարկե, Խորհրդային մուսասամանում կնքած հավաքական պայմանագրերն ըստ վորու և բավարարության արժատասապես զա-

նազանվում են կապիտալի յերկրներում կնքած հավաքական պայմանագրերից : Արա վրա մանրամասն կանու առնենք :

ՀԱՎԱՔԱՆՆԵՐՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ— Բուրժուական յերկրում արհմիութիրը ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐ- թյան կնքած հավաքական պայմանագրերը : ՀԱՎԱՔԱՆՆԵՐՆ ԿԲՐԵԵՐՈՒՄ : ՀԱՎԱՔԱՆՆԵՐՆ ԿԲՐԵԵՐՈՒՄ :

Նա ճշությամբ արտացորում է բուրժուազիայի և բանվոր դասակարգի ուժերի վոխարաբերությունը : Հաղթանակում է բուրժուազիան—հավաքական պայմանագրի պայմանները, այսինքն աշխատանքի պայմանները վատանում են . Հաջողությամբ հարձակվում է բանվոր դասակարգը—բանվորների գրությունն ըստ հավաքական պայմանագրի լավանում է : Կապիտալիզմի յերկրում կնքած հավաքական պայմանագրի ըրոք հեղափոխական պայմանագրը գաժան գործադրության կոփմներից հետո բանվորներին թույլ է առյօն ամրանալ ձեռնարկութերից խլած տնտեսական դիրքերում և նախապատրաստություն սկսել հետագա հարակիման համար : Բնու սմին հեղափոխական արհմիությունը վաչ մի վայրկյան չի մոռանում, վոր մենակ հավաքական պայմանագրերով, նույնիսկ ամենասուզավետներով յերբեք չի կարելի բանվոր դասակարգի ազատագրությանը հասնել և իր տնտեսական կըռուին ինքնանպատակ չի դարձնում : Նա ձգտում է բանվորների նյութական գրության ամեն մի լավացումը ողտագործել, վոր ե՛լ ավելի ամրացնի և համախմբի բանվորական կազմակերպությունների գրոհի գորաշաբեքը, նախապատրաստի վճռական հարվածի զգինքած ապատամբության, բուրժուազիայի իշխանության տապարման և պրոլետարիատի գիկատառության հաստատման համար, գիկատառության, վոր մի սնցողական տառիճան և կոմունիզմի հանապարհի վրա : Հավաքական պայմանագրերի կոփմը հեղափոխական արհմիությունը վարում է վոչ թե բուրժուազիայի հետ մանր համաձայնությունների միջոցով, վոչ թե զիջումների միջոցով, այլ գործադրության սուրբ ընդհարումների միջոցով : Դրանով նա անգաղար պահպանում է իր անդամների մարտական վողին, նրանց ընտելացնում և մասսայական հեղափոխական գործողության, փորձով սպառեցնում և, վոր «միայն իր սեփական ձեռքով», թե թեր աված իր ընկերակիցների հետ, զաժան կովում բանվոր դասակարգը կարող է զիջումներ կորզել բուրժուազիայից : Այսպիսի

կրիվը համուն հավաքական պայմանագրի—մասսաների դասակարգային կովի ամենալավ միջոցներից մեկն է :

Սակայն, չառ ավելի հաճախ, Արեմուտքի յերկրներում հավաքական պայմանագրերը մի գործիք են զառնում, վոր կազմնագում են բանվորների հեղափոխական յեռանդը, մի գործիք կապիտալիզմի ամրացման համար : Առնենք, որինակի համար, Անգլիայի ու Ֆրանսիաստական (համաձայնողական) արեգ-յունիոնը : Այդ տըրուղի-յունիոնը ժխտում է, թե բանվոր գասակարգի համար անհրաժեշտ ե բանի կերպով բուրժուազիային տապալել : Նա հայտուրարում է, վոր խաղաղ ճանապարհով, ամենորյա տնտեսական կովով, իր հավաքական պայմանագրերը կնքելով, աշխատավարձի ուուրլու վրա կոպեկ ամելացնելով և բանվորական որը բոստ-բոստե կրծառելով, կամաց-կամաց «գանղաղ քայլերով», յերկչու զիգ-զագով» բանվոր գասակարգը սոցիալիզմի թագավորությունը կը մտնի : Այդպիսի արեգ-յունիոնի համար հավաքական պայմանագիրը մի միջոց չե ներփակուր կրվում ընդդեմ կապիտալի, այլ ինքնուրույն ու ինվին բավական մի նպատակ : Հավաքական պայմանագիր կնքված է, նշանակում է ամեն ինչ բավ է : Յեկ վարովհետեւ այդ գեղին արհեստակացական կազմակերպությունների «խաղաղասիրությունը» նրանց յերկչու զգվանք և ներշնչում դեպի հեղափոխական յեղանակները, ապա նրանք գերազանցում են զործուների փոխարեն ձեւնարկուների հետ զործը կարգի զցել խաղաղությամբ, համաձայնվելով անտեսաների 20 կ. Հավելումին այնաեղ, ուր բանվոր գասակարգը վճռական գրոհով կարող եր մի ուորլի կորցել : Հասկանալի յե, վոր այդպիսի հավաքական պայմանագիրը կապում է բանվորների վոտն ու ձեռքը :

Դրա միտարեն նա շատ հաճելի յե բուրժուազիային, վոր իրեն խիստ հանդիսա ե զգում իր հավատարիմ ծառաների, բանվորական դեղին միությունների առաջնորդների աշարուրջ պահպանության տակ : Իսկ այդ ծառաները գործում են ձիչտ վոր «զովելի» ժրաշանությամբ : Այսպես, որինակ, Անգլիայում կաթոսայագործների (կոտելյանք) միության անդամները մի անգամ ովտվեցին այն բանից, վոր ձեւնարկուները կարիք ունեցին շտապ կերպով նավը կարկատելու և պահանջեցին աշխատավարձի բարձրացում հավաքական պայմանագրի հաստատած նորմայից վեր : Զեռնարկուներն սովորված յեղան համաձայնել, սակայն կաթոսայագործների միության գեղին խորհուրդը, աշխատանքը վերջացնելուց հետո, հավելյալ դրամները միության անդամներից խլց և, «որինականու-

թյան» հսկիչ հանդիսանալով, կասղիստը լիստներին վերադարձրեց այն...

Բուլորի հիշողության մեջ դեռ թարմ են գերմանական արհ-րյուրոկրապների անլուր դավաճանության որբնակները, փորոնք 1923 թ. աշնանը չողոքորթությամբ համաձայնության յեկան դեր-մանական բուրժուազիայի հետ 10-ժամյա բանվորական որ մըսո-ցնելու և աշխատավարձի կրծատման մասին :

Բուրժուազիան բանվոր դասակարգի զեմ կովկելու մենակ չե-նրա շահերը պաշտպանում ե բուրժուական պետությունը, այսինքն՝ կապիտալիստների քաղաքական իշխանության որդանը : Ճիշտ ե . պետությունը կեղծագործությամբ հայտարարում ե, վոր նա բարձր ե գասակարգերից, վոր նրա խնդիրներն են՝ ընդհանուր բարիքը, բոլոր քաղաքացիների հաշուեցումը և բարեկեցությունը : Բոլոր բուրժուական կառավարությունները սիրում են առաջ քաշել իրենց բանվարական որենսդրությունը, ապացուցել, վոր նրանք հասուն որենքներով պաշտպանում են բանվորի աշխատավարձը, բանվո-րական որգա տեսզություննը և այլն : Խոկ ըստ Եյուրյան բուրժուա-կան յերկրի ամբողջ բանվորական որենսդրությունը միայն զիջում ե, վոր կապիտալիստների ատամները կրնացնելով ստիպված են ա-նել մոլեգնած բանվորական շարժմանը : Երանք այդ զիջումներն անում են, վորպեսզի չզրկվեն ամբողջ իշխանությունից ու հարրա-տությունից, խարեն բանվորներին վորորմությամբ և առաջին հարմար դեպքում բոլոր վորորմություններն հետ վերցնեն :

Վորպեսզի Առևսաստանում ցարական կառավարությունը վերջ-նականապես վճռեր հասակավորների բանվորական որը 11 ու կես ժամով սահմանափակել, խոկ տոնական որերի նախորյակին և զի-շերային աշխատանքները—10 ժամով(1897 թ. Հունիսի 2-ի որենքը), հարկավորվեցին հեղափոխական շարժման հզոր աճումը և Պիտերի հոյակապ գործադրությունը 1896 թ. մայիս-հունիսին և 1897 թ. հունիվարին : Անզիայում բանվորների ձեզման տակ դեռ 1847 թ. որենքով հաստատվեց 10-ժամյա բանվորական որ : Սակայն հար-կավոր եր 60 տարուց ավելի, պետք ելին ածխահատերի հոկայս-կան գործադրությունը, վորոնք ընդգրկեցին ավելի քան միլիոն մարդ, վորպեսզի 1908 թ. որենք ընդունվեր, վոր սահմանափա-կում եր աշխատանքի որը հանքային բանվորների համար որական 8 ժամով (սոորյերկրյա աշխատանքներ), իսկ 1912 թ.—օրենք, վոր աշխատավարձի մինիմում եր հաստատում հանքային բանվորների համար : Բմպերիալիստական պատերազմի հեղափոխական ցնցում—

ները հարկադրեցին Անդրիային, միքանսիային և Գերմանիային 1919 թ. 8-ժամյա բավորական որ հաստատել, բայց հետագա տարիների կապիտալի հարձակման հետ զիջումը համարյա ամենուրեք հետ վերցվեց սոցիալ—համաձայնողականների բարեհաճա աջակցությամբ:

Բոլոր յերկրներում գոյություն ունեցող աշխատանքի բուրժուական մինիստրությունները վոչ այնքան աշխատավորների շահերի պաշտպանությամբ են զբաղվում, վորքան ձեռնարկուների «արդարացի» շահերի ապահովությամբ: Գործարանատերերի և ֆարբիկանաների սմէն մի քիչ-շատ նշանակալի ընդհարման ժողանակ բանվորական միությունների հետ, աշխատանքի մինիստրությունները շապատմ են համպես զալ «հաշության հրեշտակի» դերում, ի հարկե, այդ հաշությունն ի հաշիվ բանվորների կատարելով: Իսկ այն յերկրներում, վորտեղ կապիտալի հրակայական ուժը նրան թույլ և տալիս աշխարա վասնահարել հենց իր սեփական բուրժուական կանոնները, ինչպես, որինակ, Ամերիկայում, այնազ կատավարական դատարաններն ել ուժերը ներածին չափ մասնակցում են ձեռնարկուների պաշտպանությանը համբական պայմանագրերը կնքելու ժամանակ: Այսպես, որինակ, յեթե Ամերիկայում համբական պայմանագրի պայմաններից գժգոհ վորեն արհմիություն մտածի զործադուլ հայուրաբել, ապա բացի ձեռնարկուների տրամադրություն մեզագույն ամերիկյան դատարանները կոչում են այդ նշանակում և, վոր ամերիկյան դատարանն արհմիությանը մեզագույնը նկրայացնում համբական պայմանագրերը խախտելու համար, նրան մեզագոր և հայուրաբում այն բոլոր վնասների մեջ, վոր կրում և զործրանատեր-ֆարբիկանուր զործադուլի չնորհիլ և ձեռնարկուին կատարողական թերթ և տալիս արհմիությունից պահճելու այդ վնասները: Միության զործադուլային Փօնդերի վրա արգելանք և դրվում և զործադուլը պայմում և: Դեմոկրատական յերկրում «անկախ» դատարանը «աղնվորեն» կատարում է իր պարագը:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԿ- ՅԵԹԵ ԽՈՐՀՐՊԱՅԻՆ ԾԱՌԱՍՏԱՄԱՆԱՄ  
ԳԱՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԺԱՌԱՎՈՐ-Վարձակալական կառվիտու-  
ԴԻԿԱՆԱՏՈՒՐԱՅԻ ՅԵՐ- լի վերաբերմամբ հավաքական պայ-  
ԿՐՈՒՄ : ժանապիրը պահում և գասակարգային  
նշանակությունը, ապա պիտական

ձեռնարկությունների վերաբարմամբ այդ յերբեք չի կարելի ասել : ԽՍՀՄ արհմիտությունը հավաքական պայմանագիր և կնքում «կար-  
միր գիրեկատրի» հետ, այսինքն՝ բանվորական պետության լիո-  
վորի հետ : Այդ նշանակում և, վոր միությունների մեջ համա-  
խմբմբած բանվորները համաձայնության են գալիս աշխատանքի  
պայմանների մասին հենց իրենց աշխատավորների պիտության  
հետ, այսինքն՝ ըստ ելության իրենք իրենց հետ : Վոյ մի գասա-  
կարգային թշնամության մասին այսուղ խուզ անդամ լինել չի  
կարող : ԽՍՀՄ արհմիտությունները չափազանց զգայուն և ուշա-  
զիր կերպով են վերաբերվում իրենց «Ճենարկություն»-խորհրդային  
պետության շահերին : Երանք հիմնալի հասկանում են, վոր ամեն-  
ից առաջ «քանիվոր դասակարգն ամբողջուրյամբ առաջ շահա-  
գրգուված և իր գիլտատուրայի ամբագման մեջ և զիեկան ու զի-  
շումների միջոցով ձգուում ե վերականգնել իր տնտեսուրյունը» (Մ. Տօմսկի: Պրօֆեօօզն հա հանիք ության) : Հավաքական  
պայմանագիր կնքելով, ԽՍՀՄ արհմիտությունները սիրով  
ու գիտակցարար կրել են ու կրում են այդ զուշերը, չարունակ հի-  
շելով, վոր «ամենից բարձր են դասակարգի շահերը» : Բնդհակա-  
ռակը, Արեմուտքի յերկրների բանվորները, ինչքան վոր նրանց  
հաջողվում և իրենց զեղին առաջնորդների ազգեցությունից ա-  
զատագրվել, ձգուում են խորակել բուրժուազիայի ու նրա պե-  
տության բարեկեցությունը : Երանց համար քիչ ցավ և, յեթե  
դորժակությ չնորհնիվ կամ հավաքական պայմանագրի պատճառավ  
Ճենարկութ վաստակը պակասի : Արեմուտքում զիսամոր հավա-  
քական պայմանագիրն ամբողջ յերկրի մասշտարով արդյունա-  
րելության ավյալ ձյուղի Ճենարկունների միությունների և  
բանվորների միությունների բնդհարման յեղանակն են : Իսկ զրյ-  
խավոր հավաքական պայմանագիրը ԽՍՀՄ մեջ—մի միջոց և, վոր  
հնար և տալիս խորելային պետուրյանը և նրա ոզնականին, արհ-  
միությանը, ինչքան կարելի յե ավելի լավ ապահովել բանվորների  
շահերը և կարգի ցել արդյունաբերուրյան այն մասի կառավա-  
րումը, վոր ամբողջովին դեկավարուրյուն և պահանջում կինտրո-  
նից :

Որինակ բերենք յերկաթուղիները : Ամբողջ ԽՍՀՄ մեջ նրանք միասնական մի ամբողջություն են, վոր միացվում են ու դեկապարփում Մոսկվայից Հաղորդակցության ծանալարհների ժողովրդական Կոմիսարիատի միջոցով : Այդ միությունը բոլորովին անհրաժեշտ է Խորհրդայն Միության ժողովրդական անտեսության լավագույն գարզացքան շահերի տեսակետից : Յերկաթուղիների անտեսական և վարչական միությունը պարհանջում է միություն յերկաթուղայինների աշխատանքի պայմաններում, չըխոսելով դեռ այն մասին, վոր պետական նյութական ուժանդաւկությունները յերկաթուղայիններին բաց են թողնվում նույն Հ. Ճ. Փ. Կ.-ի միջոցով : Պետք է ուշագրության առնել նույն այն, վոր յերկաթուղային ցանցի առանձին մասերը կարող են վաստակարեր լինել, կարող են և վնասարեր լինել, նայած այն բանին, թե ինչքան և ինչ բեռներ են նրանք փոխադրում : Յեթե յերկաթուղայինների միության կոմիտեներին թողնվի պայմանագիր կրնաքելք, ապա յերկաթուղու բանվորների մի մասը համեմատարար կապահովվի, իսկ մյուսը՝ քաղցած մինիմում ել չի սահանա : Իսկ պլաստիկ համաքական պայմանագրի գոյության դեպքում ՀՃՓԿ միջամ կարող է դրամական ոգոնություն հասցնել ամենահետամնաց տեղերին և այդպիսով բանվորների աշխատավարձը հնարավոր չափով լավագույն միջին մակարդակի վրա պահել : Իսկ դրա հետ միաժամանակ՝ յերկաթուղայինների միության տեղական բաժնների կնքած լրացուցիչ տեղական համաձայնությունները թույլ են տալիս փորեկ տեղական միջոցի ու հնարավորության հաշվին ել ամելի լրացնել բանվորների գրությունը :

Խորհրդային Միությունը պրոլետարիատի դիկտուտուրայի պետությունն է : Այդ նշանակում է, վոր նու իր ուժերի և կոտապարական ապարատաի ամբողջ հղուրդությամբ հսկում է աշխատավորների շահերը : Աշխատանքի բուրժուական մինիստրությունների փոխարքն ԽՍՀՄ մեջ գոյություն ունի Աշխատանքի ժողովության միջազգական Կոմիսարիատը, վոր աշխատում է անմիջական սերտ զագ պահպանելով ՀԱՄԿի և արհմիությունների հետ և պլութօտարական դիկտուտուրայի գործադիր մարմինն ե հանդիսանում բանվորների և ծառայողների համար աշխատանքի լավագույն նյութական և իրավական պայմանների հաստատման և պաշտպանության գործում : ԽՍՀՄ այդ ասպարիզի բոլոր վորոշումները հավաքած են միասնական «Աշխատանքի Արենադրքի» մեջ և վոչ մի անձնական աշխատանքային, ինչպես և համաքական պայմանա-

գիր չի կարող կնքվել, յեթե նրա մեջ կան վորոշումներ, վորոնք «Որենսպրքի» վորոշումների համեմատությար, վատացնում են աշխատավորների դրությունը: Միայն խորհրդային Աշխատանքի Որենսպրքն և խօսքանառողջ բանվորական որենսպրություն: Վորի մասին խոսք անդամ չի կարող լինել կապիտալիզմի յերկրություն:

Որենսպրքի 4-րդ հատուկ բաժնում (Հավաքական պայմանագրերի մասին) § 21-ում մատնանշվում է, վոր ամեն մի հավաքական պայմանագրի անողային պետք եւ ցուցակագրվի Աշխատողկամքի որդանում (աշխատանքի նահանգական բաժիններում և այլն): Այդ նրա համար և, վոր Աշխատողկամքը կարողանա հետեւ, թե արդյոք ճիշտ եւ կնքված հավաքական պայմանագիրը, արդյոք նրա մեջ չկան այնպիսի մասեր, վորոնք դույություն ունեցող աշխատանքի որենքների համեմատությամբ բանվորների և ծառարդների դրությունը վատացնելուն յեն հակված: Յեվ յեթե իրոք այդպիսի անձիշտ հոգվածներ յերեան դան, առա Աշխատողկամքը (իսկ տեղերում—Աշխատանքի նահանգական բաժինները)—բանվորական պետության աշարուրջ աչքը և ձեռքը—անմիջապես վերցնում և այն:

Աշխատանքի Որենսպրքը պաշտպանում և բոլոր վարձու աշխատողների շահերը և նույնիսկ յեթե նրանք այնքան անդիտակից են, վոր դեռ արհմիության անդամ չեն: Այդ պատճառով նույն 4-րդ բաժնի § 16-ում հիշատակում է, վոր «Հավաքական պայմանագրի պայմանները տարածվում են ավյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ աշխատող բոլոր անձերի վրա, անկախ այն բանից, արդյոք նրանք պայմանագրի կնքած արհմիության անդամ են, թե վոչ»:

Չափազանց կարենը § 20-ը մատնանշում է, վոր «Արհեստական կական միությունները դույքային պատասխանառությունը չեն կրում հավաքական պայմանագրերի համար»: Հենց սրանով Խորհրդային Որենսպրությունն անհնար և գարձնում միությունների գումարների և ֆոնդերի այն հավատակության վորմերը, վորոնց ձեռնարկուները դիմում են Արհմուտքում ու մտնությունիւն Ամերիկայում:

Յեվ, վերջապես, քրեյական հանցագործություն և հայտարարվում հավաքական պայմանագրի խախտումը ձեռնարկուի կողմից, այսինքն՝ արհմիությունների աշխատանքի ամենալարանը կողմերից մեկի պայյը եցումը: Այս վորոշումով վերջանում է այն կարուկ սահմանագիծը, վոր բաժանում է հավաքական պայմա-

նոպրի եյությունը և դեպի նա ունեցած պետական վերաբեր-  
մանքը խորհրդային յերկրում նրա եյությունից և դեպի նա ու-  
նեցած վերաբերմունքից վորհե այլ յերկրում, վորսեղ կառավա-  
րում և բուրժուազիան:

Ի՞՞ՉՊԵ՛Ս ԿՆԹԵԼ ՀԱՎԱ-  
ՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ : ունի հավաքական պայմանագիրը  
ԽԱՀԵՄ մի արհմիության հա-  
մար :

Մի կողմից, նա բարականում և բանվորների և ծառայողների  
նորութական գրությունը և նրանց կենցագային պայմանները : Մյուս  
կողմից, հավաքական պայմանագրի կնքումն ահապին կազմա-  
կերպչական-գասափարակչական նշանակություն ունի միության  
աշխատանքի համար : Մասնավոր ձեռնարկությունների բանկոր-  
ների հետամնաց մասսային հավաքական պայմանագիրը համա-  
խմբում և միության չորքը, սովորեցնում և անհնել նրա մեջ  
բանվորների շահերի պաշտպանը : Պետական ձեռնարկության  
բանվորը հավաքական պայմանագրի կնքման ընթցքում ամենից  
առաջ սովորում և զգաստ, խոհուն վերաբերիլ իր արտադրու-  
թյանը, անդադար հող տանել ոսցիալիստական տնտեսության վե-  
րածնության և կոմունիզմի շնարարությանը մասնենալու մասին :  
Իսկ մասնավոր ձեռնարկությունների բանվորների մեջ հայարա-  
կան պայմանագրի կովկը զարգացնում և իրենց զանակարգային  
շահերի պարզ գիտակցությունը, աշխատանքի միացման անհրա-  
ժեշտությունը՝ կապիտալի դեմ կովելու համար :

Նշանակում և, պետական ձեռնարկության մեջ հավաքական  
պայմանագիր պետք և կիրել այնպիս, վրաբեսզի, նախ, միու-  
թյան բայն մասսաները մասնակցին նրան, յերկրորդ, վորպեսզի  
խորհրդային արտադրության հարցերը, այդ արտադրության  
մասին հոգալը կարուկ, «լրջորեն ու յերկար ժամանակով» միու-  
թյան ամեն մի մասամբ առաջ զրիւն : Շատ վատ կը լիներ, յեթե  
միությունները հաջի չառնեցին այս բոլորը և հավաքական պայ-  
մանագրերը ծածուկ կնքեցին, միության վարչության մեջ կամ  
տնօրինի կարինեալի բության մեջ : Բացի այդ, յերե մասսան ըր-  
մանակցեր հավաքական պայմանագրի կենցանը և նրա բովանդա-  
կությանը ծանոր չիներ, ձեռնարկության մեջ հանալ ընդհա-  
րությունը կծագեցին :

Ասենք, զործարանի վարչությունը և միությունը հետազո-

տելով գործարանի կացությունը, վճռեցին, վոր արտադրանքի նորմաները (ո օրմ ա վ ք թ ա բ օ տ է ն) չափազանց ցած են, 25 տոկոսով բարձրացրին այն և մացրին հավաքական պայմանագրի մեջ: Մասայի վրա, վոր ինչպես հարկն է, գործարանի արտադրության կացությանը ծանոթ չե և հավաքական պայմանագրի կնքմանը չի մասնակցել, նորմայի բարձրացումը, այն ել առանց վարեկ բացարության, այն ապագորությանը կթողնե, վոր ուղղակի նրա գտառումը կրծատելու փորձ են անում: Գործարանում սկսվում է խմբումը, բանվորները սկսում են կշամքի վոչ միայն տնտեսական որդանին, այլև միությանը: Բանվորները վացում են գործարանային կոմիտեն, իսկ յերեկոն գործարանային կոմիտեն ինքն ել վոչինչ չգիտե պայմանագրի մասին: Ապա, ինչպիս գիտենք, մեկ խելքը լով և, իսկ յերկուսն ել ամենի լուս: Միությանը և տնտեսական որդանիը գործարանի հետազոտության ժամանակ հույսը գրել ելին իրենց գիտելիքների ու փորձի վրա: Բայց գործարանում կան մի շարք հին, բարձր-վորագրալ բանվորները, վորոնք լով են հաւկանում արտադրությունը, հիշում են գործարանի դրությունը զետ նախապատճերազմական շրջանում: Երանք մանում են թե՛ գործարանային կոմիտեյի մեջ, թե՛ համբարային պատգամագործների և՛ բնդհանուր ժողովի կազմի մեջ: Յեթե արտադրանքի նոր նորմաների հարցը նրանց հետ միասնել քննության առնվազեր, առաջ կարող եր, որինակի համար, յերեան զար, վոր մի քանի հաշիվների մեջ սիսալ և կատարված, վոր մի քանի համբար ու բոյունում կամ բաժանմունքներում նորման պետք և բարձրացնել ըստ 25 տոկոսով: Այսպիսով միությունը հավաքական պայմանագրի կնքելով, պետք և ինչքան կարելի յե լոյն կերպով իրազեկ դարձնի բանակցությունների բնթացքին վոչ միայն իր սուրբն բջիջին, գործարկումին, այլև միության անզամների լայն մասաւոյն, ավլու ձեռնարկության բանվորներին և ծառայողներին:

Այցելնք այժմ վրեե ձեռնարկություն և զիտենք, թե ինչպես և կատարվում այս բայլը իրականում:

Գյուղատնտեսական մեքենաների № 3 գործարանում, վորտեղ աշխատում եր Մինասյանը, վեց ամսով կնքած հին հավաքական պայմանագրի ժամկետը վերջանում եր: Գործարանային վարչությունը և միությունը յեռանդապին պատրաստվում ելին նորից կնքելու այն: Համաձայն գործարանային վարչության կազմած արտադրական ծրագրի, նույնպես և համաձայն գործարանի արտադրած գութանների ինքնարժեքի կալկուլացիայի

(Հաշվելու), դուրս եր գալիս, վոր բանվորների աշխատավարձու վոչ մի կերպ չի կարելի բարձրացնել, անհրաժեշտ և 1-ին կարգի համար թողնել 9 ու 50 կոպ. վոսկով։ Բացի այդ, բոլոր բաժանմունքների համար արտազրանքի նորմաներն անհրաժեշտ և միջն հաշվով 15—20 տոկոսով բարձրացնել, և այն ժամանակ նըրանք այնուամենայնիվ, կհասնելին նախապատերազմականի 80 տոկոսին միայն։ Վերջապես, անհրաժեշտ սպարմանագիրը մեկ տարով կնքել։

Տեղական մետաղարեսուր, վորի կազմի մեջ եր ժամանակ՝ № 3 դործարանը, համաձայննց դործարանային վարչության ապացույցներին և համապատասխան բանակցություններ վարեց մետաղագործների միության շրջանային կոմիտեի հետ։ Միության վարչության նիստում, վոր տեղի ունեցավ ձեռնորկության բոլոր գարծարանային կոմիտեների մասնակցությամբ, վճռվեց № 3 դործարանի հավաքական պայմանագրի նախազիծը գործարանի պատգամավորական ժողովի քննությանը դեմք, ապա գործարաբանային կոմիտեյի նիստին, ընդհանուր ժողովի քննությանը և վերջապես, շրջկոմի վարչական հաստատմանը։

Պատգամավորական ժողովում դործարանի դիմավոր ինժեները, վոր յեկել եր մի կազոց հաշիվներով և աղյուսակներով՝ պաշտպանելու դործարանային վարչության ներկայացրած կոլկուցիան, ինչպես ստում են, չառ նեղն ընկալ։ Մի շարք պատգամավորներ, վոմանք 15 և 20 տարվա սաժով, հմտորեն միերկացրին բոլոր թերությունները։

Աշխատավարձը բարձրացնելու միջնորդներ չկան, իսկ ինչու յեն շատաները փթթել։ Յեթե շատաները կրծառվեն գրասենյակում, ապա վարուչ բաժանմունքում հարկավոր միջնորդներ կիրականացնեն։

Գութանի արժեքը սիստեմ հաշված, չափազանց մեծ տոկոսային ծախքեր են ցույց տված և վաստակի չափեց դուրս նորմա։ Տրեստն իր ուժական առևերացին սովորաբան ստեղծելու կարիքը չունի, կարելի յե հիանալի սովորացնել Նահանգային Առեւտրային բաժինը, նույնապես դյուզատանակական կոռպերացիան։ Վաստակի հետեւց ել չառ չպիտի ընկնել, պետք է նախ գործարանի բացելը ծածկել։

Միասնական ել խոսեց։

Նորմայի բարձրացումը բայց բան է, բայց պետք և հմտորեն անել։ Մեր վականագործական բաժանմունքում, որինակ, ար-

տագրանքը նախապատերազմականի չափ և : Այսուո բաժանմունքներում հնարավոր և պետք է բարձրացնել, իսկ մեզ մոռ չի կարելի, վորովհետեւ աղերքն ուժից կնկնեն :

Գործարանային կոմիտե հետեւյալ առաջարկությունները մըսացիցին .

— Զգաել, վոր աշխատավարձը 1-ին կարգի համար 9 ո . 50 կոպեկից բարձրանա 10 ո . 50 կոպեկ : Տրեսոք զրա համար հարկավոր միջոցները կդանի շատաները կրամակով, նույնպես և ողտագործել աշխատանքի արտադրողականության բարձրացումը, արտադրանքի նորման 15 տոկոսով բարձրացնելու նորմայիլ : Փականագործական բաժանմունքում նորման չբարձրացնել : Հավաքական պայմանագիրը վոչ թե մեկ տարով, այլ վեց ամսով կնքել, վորովհետեւ 4 ամիս հետո գյուղատնտեսական սեղոնն սկսվում և, տրեսոք լավ առեսուր կանի, նրա նյութական դրությունը կրամական և կարելի կլինի նորից խոսել համարական պարմանագրի պայմանների մասին :

Գործարանային կոմիտեի նիստում, վորին մասնակցում եր միանթյան ներկայացուցիչը, հարցը յիրկառ ու լուրջ քննության առնվեց : Ամբողջ յիրկու ժամ խոսդ գործարանի տնօրենի բոլոր ապացույցները մանրամասնորեն քննության առնվեցին :

— Ահա թե ի՞նչ, բնիքներ, ասաց վերջապես գործարանային կոմիտեի նախագահ Թագինոյանը, — Հարցը պարզ և : Պատկամավորական ժողովի բոլոր առաջարկները կարելի յե ընդունել, բայց միանդից առաջին կարգի աշխատավարձը մեկ ուորով բարձրացնելը չի կարելի ընդունել : Ի՞նչ թագանենք-արեալի գործերը շատ վատ են, ինքներք գիտեք, վոր նրա ըրջանառության միջոցները պակասում են, առայժմ գութանները անշարժ ընկած են պահանջաներում, իսկ մինչև գյուղատնտեսական սեղոնը դեռ շատ ժամանակ կա-ուղիղ և ամիս : Այս, մի վեց ամիս հետո բանն այլ և, իսկ առայժմ առաջին կարգի համար 10 ո . ավելի պահանջ դնելուց դենք չպես չպես և անցնել : Այլապես արեալը չի գիմանա և այն կսացվի, վոր ինքներու մեր առենը քանդում ենք...

Հարցն այլպես ել զրեցին ընդհանուր ժողովում : Սկզբում չափական ազմուկ դուրս յեկավ : Հանդես յիկող հսկողությունները խիստ բորբոքվում եյին :

— Յեղած արտադրանքի նորմաները ( ԵԿ Բարեկամական այն, առանց այն ել գլուխ չեյին հանում, իսկ այժմ ելի յեն բարձրացնում : Իսկ ոռանիկը, վոր 9 ո . 50 կ . եր, այժմ միայն ընդամենը

50 կոսկեկ են ավելացնում : Նշանակում ե , ամեն բան մեր վզին պետք ե զցել : Իսկ վո՞րակ եր գործարանային կոմիտեն :

Բայց հանդես յեկան պատգամավարները , բացատրեցին , թե բանն ինչումն է : Վերջապես հանդես յեկավ մեծ միքուքով «քեռին» , գործարանի ամենալավ բանվորներից մեկը , վոր անփոփոխ կերպով աշխատել եր նրա մեջ հիմնան որից ի վեր և ասաց .

— Հարցը պարզ է : Գործարանն այժմ ո՞ւմն է , անսեսատերին մի՞թե : Եա պետական է , մերը , նշանակում է , բանվորական , և մենք նրա համար ամբողջ բանվոր զատկարգի առաջ պատասխանառու յենք :

Վոր արեսար քիչ փող ունի , այլ ինքներս ել զիտենք : Ե՛լ , փող վո՞րակից կարող ե լինել , յերբ զութանները ծախված չեն : Փոխանակ աղջկելու , պետք ե ոպնել զործարանին : Յեթե մենք չողնենք—գուշ վոք չենիք : Զե՞ վոր ուրիշի զործը չենք չինում , այլ մեր զործը : Վոր պետք ե նորման բարձրացնել—այդ նույնպես ճիշտ է : Այլ կերպ յերրեք տակից զուրս զալ չենք կարող , չենք վերականգնի տնտեսությունը , մեր ապրանքը միշտ թանկ կը լինի : Յերեմն ծանր ե լինում , ի՞նչ արած , չո՞ բութուանների համար չենք աշխատում , այլ ինքներս մեղ համար : Տրեստից արած պահանջները , լավ մաներդ պահենք , պետք ե 7 անգամ չափել և մեկ անգամ կարել : Այժմ առաջին կարգի համար 10 ո . ավելի սոսանալ անկարելի յէ : Գարնանը զործարանի զործերը կարգի կրնկնեն , մեր բանն ել լավ կը լինի : Մենակ յես չեմ ասում , պատգամավորներն ել են քննել , գործարանային կոմիտեն ել : Իսկ նրանք ո՞վքեր են : Մեր ներկայացուցիչները , ինքներս ենք նրանց ընտրել , ուրեմն պետք ե պաշտպանենք ել :

Պատմանազիբն ընդունեցին միաձայն , յերեք հոգու ձեռնորդակայինություն :

Մի շարտի անց համարյա առանց վարեկ փափոխություն Նէ 3 դործարանի հավաքական պայմանագիրը կնքվեց ըրջկոմի վարչության և տրեստի միջեւ և ուժի մեջ մտալ : Գործարանային կոմիտեյում , համբարության մեջ , գործարանային ակումբում կացըրին պայմանագրի պատճեները : Ծուտով զործարանային ամբողջ մասսան ծանոթացավ նրա հետ :

Պատմեներից մեկը ուղարկվեց ակումբին կից արհշարժման խմբակին և մի շարք պարապմունքներում խմբակի անդամները , ինչպես հարկն է , մշակեցին հավաքական պայմանագրի հարցը ,

քննելով վոչ միտյն հավաքական պայմանագրի դորձնականը, այլև ժեռիան :

— Ինչպես արդեն զուք գիտեք, ՀԱՄԿի որինակելի (տիպական) հավաքական պայմանագրի § 5 համաձայն, յեթե յերկու կողմերը ցանկանան, ապա պայմանագրի ժամկետը կարեւէ ին յերեսորդութեալ : Դրա համար նրանցից մեկը, ամենք, անհետական որդանը զրավոր կերպով տեղեկացնում է իր ցանկության մասին համապատասխան արհմիությանը : Յեթե միությունը համաձայնվի՝ լույ : Խոկ յեթե միությունը մեկ շաբաթվա ընթացքում պատասխան չի տալիս, ապա այդ պատասխան չույն ել յերկարացման համաձայնության արտահայտություն և համարվում : Այս կեսը լրացնում է § 4, զոր մատնանշում և, թե յերբ պայմանագիրը ստորագրված և, ապա կողմերից մեկը ըստ իր հայեցալության իրավունք չունի փոխելու այն : Դրա համար անհրաժեշտ է յերկու կողմի փոխազարձ համաձայնությունը :

— Քննենք այժմ հավաքական պայմանագրի յերկրորդ բաժինը՝ «վարձում ու արձակումք» : Մեր բերած որինակում, № 3 գործարանում, վարչությունը պարտավոր է աշխատանիքի ընդունել առաջին հերթին արհմիությունների անդամներին (պայմանագրի § 8) : Ինչո՞ւ առաջին հերթին : Հենց նրա համար, զոր ամեն մի միություն իր խնդիրներից մեկն ել համարում է իր անդամների նյութական և իրավական շահերի պաշտպանությունը : Միության ամեն մի անգամ, զոր կատարում է իր պարտականությունները բանկարական կազմակերպության շարքերում, լիակատար իրավունք ունի ամեն տեսակի պաշտպանություն սպասելու իր միությունից : Աւշադրություն դարձեք «առաջին հերթին արհմիությունների անդամներին» բառերի վրաք, այսինքն վոչ միայն մեր մետաղագործների միության անդամներին, այլև մանածագործների, փայտագործների և այլն, յեթե միայն նրանց շարժերում գոնվեն հարկավոր վորակի բանվորներ : Այլ կերպ չեն կարող վարչել ԽՍՀՄ միությունները, վարովչետե այն ժամանակ իրավական համարականություն կառացվեր :

— Շարունակության մեջ (հավաքական պայմանագրի § 8) կարգում ենք՝ «ամեն մի ընդունված բանվորի առքիվ գործարանային կոմիտեյին տրվում է պատճառարանված մերժման իրավունք» : Իրոք, գործարանային կոմիտեն միության աշքն է ձեռնարկության մեջ : Յեթե աշխատանքի յև ընդունվում վոչ միություն

անդամը, յերբ կան նույն վորակի բավականաչափ զործագութեամբ միության անդամներ, այն ժամանակ գործարանային կոմիտեն կը կարողանա անկանոնությունը վերացնել:

— Ըստ հավաքականի պայմանագրի (§ 10) գործարանային կոմիտեն ֆիչ դեր չի խաղալու բանվորների արձակման հարցում: Յեթև, որինակ, մեր ձեռնարկությունը քիչ պատվերներ անհնա և ստիպված լինի ձեռնարկությունը ամբողջովին կամ համբարությունների մի մասը սեղմէի և մի շարք բանվարների հաշիվները մաքրել, առաջ այս բոլորը գործարանային վարչությունը անպայման պետք է անի միության հետ միատեղ, այսինքն սովորաբար միության որդանի-գործարկումի հետ: Վերջինս ձեռնարկության բանվար մասսային լույն և ճանաչում և ամեն ջանք կը թափի, վորոպես կը կրածառումը բառ հնարավորին հիմանդրագին անթանա, վորոպես աշխատանքի մաս նու, ով իրաք ամենից ավելի շատ իրավունք ունի մասաւու: Հատկանալի յե, վոր գործարանային կոմիտեն առաջին հերթին կը պաշտպանի միությունների անդամներին, իսկ հագագական պայմանագրում (§ 10, ր. կետ) հատկապես հիշտուակած է: «Շատառների և արտադրության կրթատման ժամանակ, առաջին հերթին, հավասար վորակի ժամանակ, արձակվում են նրանք, վոր միության անդամ չեն»:

— Մեր միությունները շատ գրայուն կերպով են վերաբերվում կին բանվորուհու շահերին, հատկապես այն գեղարվում, յերբ նաև մենակ և և ծանրաբեռնված և ընտանիքով: Այդ պատճառով § 10 կ. կետը մատնանշում է, վոր «մենակ-կանաց», վորոնե մանկահասակ յերեխաներ ունին կամ նրանց ծախքով ապրող այլ անձիք, շտամինը կրթատման ժամանակ, մյուս հավասար պայմաններում, առավելությունը նրանց արվում նրանց, աշխատանիքի բողնելու իմաստով»:

— Ինչպես գուք դիմեք, արտադրության լիկվիդացիայի կամ կրծառման, ինչպես նաև իր սեփական անպետքության պատճառով աշխատանքից արձակվող ամեն վոք փոխհատուցման իրավունք ունի: Առաջներն այսպես եր, յեթև բանվորին արձակումից յերկու շաբաթ առաջ նախադրուշացնում ելին, առաջ այն ժամանակ արդեն փոխհատուցում չեր արվում: Այժմ այդ կարգը փոխված է գեղի լավը: Որինակելի պարմանագրի § 10 «յե» կետը ասում է, վոր այդ գեղքում արձակվածներին «2 շաբաթվա փոխհատուցում և արվում բառ միջին դատումի», անկախ այն բանից, արդյոք աշխատագրությունը առաջիկա արձակման մասին նախագործացված են, թէ վոչ»:

թ հարկե , այն բանվորները , վորոնք արձակվում են միության պահանջի համաձայն կամ այն ժամանակավոր աշխատանքի վերջանալու հետևանքով , վորի համար նրանք ընդունված ենին , փոխհատուցում չեն ստանում :

— Ապա , թող մեր զործարանի վորեե բանվոր միության նահանգական բաժնի վարչության անդամ ընտրված լինի , նույնպես և սկսի աշխատել իբրև միության տարիֆատանական բաժնի վարիչ : Հետեւալ ընտրությունների ժամանակ նրան կարող են չըվերջնարել և նա կը ցանկանա վերադասալ արագգության իր նախկին տեղը : Հավաքական պայմանագրի 10-րդ հոդ . «Ե» կետի հիման վրա նա լինակատար իրավունք ունի այդ անելու , վորովհետեւ «այն աշխատավորները , փորոնք ընտրվելով աշխատել են կամ աշխատում են արիեսակցական , բաղաքական , կոռպերատիվ և խորհրդային կազմակերպությունների մեջ , պահում են նախկին պաշտոնին վերադասալու կամ համապատասխան պաշտոնը վարելու իրավունքը» :

— Մենք մատենում ենք այժմ հավաքական պայմանագրի ամենակարենոր 3-րդ գլուխին՝ «Աշխատավարձը , վարձատրության նորման և կարգը» : Շատ ցանկալի կը լիներ , վոր ձեզանից մեկը այս հարցի մասին մի բան կարդար — իբրև լավ ձեռնարկ , կը մատնանրը չեմ վեյրերգի գրքույկը «Ի՞նչ ե տարիֆային համաձայնությունը» (Լենինդրագի ՀԱՄԿ հրատ .) — ապա մի փոքրիկ զեկուցում տար այդ նյութի մասին : Ո՞վ հանձն կառնի այս : Գուցե դուք , ընկեր Ամհակյան , չե՞ վոր զուք զործարանային կոմիտեյում տարիֆային մասում եք աշխատում : Գրքերն եւ ձեր ձեռքի տակ են : Համոձա՞յն եք : Լա՞վ : Ռւրեմն ցանություն :

ԱՇԽԱՏԱՎԱՐՉՈՅ : ՏԱՐԻՖԱՆ-  
ՅԻՆ ՑԱՆՅ :

Մի շաբաթ անց խմբակի հերթական-  
նիստին ընկ . Սահմանը սկսեց :

— Մենք բոլորս , ընկերներ , ոռ-  
ձիկ ստանալով , լավ գիտենք , վոր մեկին համոււմ և , ասենք , տա-  
րիֆային 8-րդ կարգով , մյուսին 9-րդ կարգով , յերրորդին 16-  
րդով և այլն : Իսկ ի՞նչ ե տարիֆային կարգը : Գործարանում մեզ  
մաս բանվորները միասնակ վարժված չեն և զանազան աշխա-  
տանքներ են կատարում : Այսպես , որինակ , դարբինի աշխատանքն  
ավելի բարդ է , քան հասարակ բանվորներ , եւ ավելի բարձր ե վա-  
կանագործի , ճախարակաղործի , ապա տեխնիկի , վերջապես ին-

ժիների վորակագորումը : Այս պատճառով այդ բոլոր բանվորներին և ծառայողներին տարբեր ձևով ել վարձատրում են՝ ավելի շատ զորակյալ (վարժված) աշխատանքի համար—ավելի շատ, ավելի քիչ զորակյալի համար—ավելի քիչ :

— Աշխատանքի բոլոր տեսակները և նրա վարձատրությունը մեղ մոռ զետեղվում են այսպես կոչված տարիվային ցանցի մեջ, կամ ավելի պարզ ասած—տարիվային սանդուխի վրա : Բոլորով վին անվարժ բանվորները կաղմում են տարիվային ցանց-սանդուխը առաջին կարգը, առաջին աստիճանը, ավելի վարժված-ները—յերկրորդ կարգը և այլն : Մենք մետաղագործներու, բնագեսնակ ԽՍՀՄ բոլոր միությունները, տարիվային ցանցի 17 կարգ ունենք : Այդ կարգերը կարգի յե գասավորել մոտավորապես այսպես :

Զեկուցողը կավիճ վերցրեց և մոտեցավ գրատախտակին (նրա նկարած «տարիվային սանդուխը» տես հետեւյալ յերեսում) :

— Ինչպես տեսնում եք, առաջին և յերկրորդ կարգը սովորաբար աշխակերաններն ու անշափահաններն են, յերբորդ կարգը—հասորակ, անվարժ աշխատանքը, 4-րդ և 5-րդ կարգը—ստորին վորակումն ե, 6-րդ և 7-րդը—վորակյալ աշխատանքն ե, 8-րդ և 9-րդը—բարձր վորակման բանվորների աշխատանքն ե : Այս 9 կարգով սահմանափակվում ե ցանցի այսպիս կոչված «Բանվորական» մասը : Իսկ յեթէ քննենք ծառայողների վարչությունը, ապա կերպիվ, զոր գրասենյակային և մտագոր աշխատանքները ընկնում են վեցերորդից մինչև 10-րդ կարգը, իսկ վարչա-տեխնիկական և դեկանար պերսոնալի աշխատանքը—10-րդից մինչև 17-րդ կարգը\*):

— Բոս մեր նոր հավաքական պայմանագրի, առաջին կարգի տարիվային կոպարը, այսինքն զատումի չափը, վոր պետք ե ստանա առաջին կարգի մեջ ընկնողը, 10 ու ե : Այժմ ի՞նչպես սահմաննենք, թե ինչքան պետք ե ստանա 2-րդ, 3-րդ, 8-րդ և այլն կարգերի բանվորը : Դրա համար զոյլություն ունին տարիվային ցանցի այսպիս կոչված կոհիֆիցիւններ :

— Այսուղ, զրատախտակի վրա, տարիվային ցանցի

\* ) Երկա սխնման միայն մոտավոր ե : Որինակ՝ պականագործները ըստ իրենց վորակման աստիճանի կարող են մտնել և 4-րդ և 5-րդ և ավելի բարձր կարգը : Մենք մատնանշել ենք միայն զերակշող, ավելա կարգի համար ամենաարնորոշ արհեստների տեսակեալից :

# ՏՐԻԳՎԱՅՐ

ՀԱՅԱՍՏԱՆ



Պատմական  
գործառնություններ

80  
համբ.

72  
11 11

67  
11 11

62  
62 11 11

55  
55 11 11

50  
50 11 11

46  
46 11 11

42  
42 11 11

39  
39 11 11

34  
34 11 11

28  
28 11 11

25  
25 11 11



22  
22 11 11

18  
18 11 11

15  
15 11 11

12  
12 11 11

8  
8 11 11



ամեն մի կարգից ձախ, դուք թվանշաններ եք տեսնում՝ 1. 1,2. 1,5 և այլն (տես նկարը)։ Հենց զրանք ել կուֆֆիցենաներն են. այդ թվերից ամեն մեկը ցույց է տալիս, թե ավելա կարգի մեջ բնկող բանվորը քանի անդամ ավելի շատ աշխատավարձ պիտի ստանա, քան առաջին կարգով վարձարկող բանվորը։ Այսպես, որինակ, 5-րդ կարգի գեմ դրված է 2,2 կուֆֆիցենոր. այդ նշանակում է, զոր, որինակ, մուրճ խփողը պետք է 2,2 անդամ ավելի մեծ կոսպար ստանա, քան աշկերտ-ողնականը, այսինքն ըստ մեր հավաքական պայմանագրի 10 ո. × 2,2 հավասար է 22 ո.։ 9-րդ կարգի գեմ կուֆֆիցենոր 3,9 է, նշանակում է կաղապարագործը ստանում է 10 ո. × 3,5 հավասար է 35 ո.։ Յեվլիքապես ամենաբարձր կարգը, 17-րդը իրավունք է տալիս ամսական ստանալու 10 ո. × 8 հավասար է 80 ո.։ Նշանակում է մեր տարիքային ցանցի մեջ ամենացած կուֆֆիցենոր հավասար է 1, իսկ ամենաբարձրը—8, կամ այլ կերպ ասած, մեր տարիքային ցանցի կարգերի հարաբերականությունը հավասար է 1:8։

— Այսպիսի տարիքային ցանցը մեկ մոտ միանդամից չկազմվուց : Իր նկրկա կերպարանքով նա հասաւալից ՀԱՄԿԽ պլենումի յերրորդ նստաշրջանում 1923 թ. սեպտեմբերին : Կարճառոս կանգ տուններ պատմության վրա : Նախապատերազմական ժամանակում անշափահաս տղան մեր զործարանում դատում եր 21 ո. 30 կ., հասարակ բանվորը—1,6 անդամ ավելի—34 ո., մուրճ խփողը—2 անդամ ավելի—44 ո., իսկ զորողները (շարժական) և ոսպալողները (ստրօգալիական) նույնիսկ 6 անդամ ավելի—120-125 ուորլի, իսկ հաշվապահը ստանում եր 18 անդամ ավելի—388 ո., դիմավոր ինժիներները 21 անդամ ավելի—475 ո.։

— Տարրերությունը, նշագես տեսնում ենք, շատ ինտ եր : Վարակյալ բանվորը վոչ թե 3,5 անդամ եր ավելի ստանում անշափահասից, ինչպես այժմ է, այլ 6-7 անդամ, չխոսելով գեռ բարձրագույն ծառայողների և վարչության աշխատավարձի մասին (վերջիններիս ճարպիկությամբ կաշառում եր բուրժուազիան)։ Ի՞նչից եր առաջ դալիս այդ զանազանությունը :

— Նախ վորակյալ բանվորի սովորելը տեսում է 3-6 տարի, նշանակում է նրա աշխատավարձն ել ավելի բարձր եր : Մյուս կողմից, Ռուսաստանը կիսագրագետ յերկիր եր(այժմ էլ նրա կուրուրական մակարդակը բարձր չէ), նշանակում է սովորած, զրացնությունը, վորակյալ բանվորներ քիչ կային : Իսկ մեր արդյունարերուն-

թյունը բուն կերպով եր անում, վորակյալ բանվորական ուժը՝ պակասում եր և ընականաբար թանկ եր գնահատվում այն :

— Դրա փոխարեն անվորակ բանվորները չափազանց շատ եյին : Նբանք կազմված եյին քայլայիմած և առատորեն քաղաք դատումի յեկա սակավահող գյուղացիներից և գյուղացիական յերիտասարդությունից, վորոնք գյուղում աշխատանք չեյին դանում : Անվարժ բանվորը խիստ ցած վարձատրություն եր ստանում, վորովհետեւ մեր գյուղացիության հսկայական մասսան, վորից ցարերը և կալվածատերերը ծծում եյին բոլոր հյութերը, մուրացիկի չորքաշ կյանքով եր ապրում : Ամենուրեք գյուղացիական շրջաններում բանվորների աշխատավարձը արդյունաբերության մեջ նշին եր : Այսպես, որինակ, խիստ ցած եր մանածագործների, քիմիական արդյունաբերության բանվորների դասաւմը : Ավելի շատ եյին ստանում մետաղագործները և տպագրիչները, վորովհետեւ արդյունաբերության արդ տեսակները զարգանում եյին քաղաքներում, խոչըր արդյունաբերության կենտրոններում, վորտեղ հարկավորվում եր ավելի բարձր վորակյալ բանվորական ուժ :

— Թաղմական կոմմունիմի շրջանում մետաղագործի և մանածագործի, անորենի և հասարակ բանվորի աշխատավարձի միջև կորուկ զանազանությունը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ժամանակավորապես հարթվեց : Բայց հարթվեց վոչ թե զատումի ընդհանուր բարձրացման, այլ բնդհանուր ցածքացման պատճառով :

— Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական պատերազմը, քաղցն ու ցուրտը, ամեն մի կոպեկը, ամեն մի Փունտ հացը խնայելու, ամենակարենորից իրեն զրկելու անհրաժեշտությունը այնազել հարցըրին, վոր աշխատավարձը հավասարեցվեց : Աշխատավարձի մեծ մասը բնարդյունքով եր արգում, իբրեւ փայ, ձրի կոմմունալ ծառայություններ, արտադրական հագուստ և այնուամենայիկ առանց վորեն կախման բանվորի արտադրողականությունից : Յեվ, իրոք, բոլոր բանվորներն այնպիսի ծայրահեղ քաղցած մինիմում եյին ստանում, վոր թվում եր, ավելի քիչ վոչ վորի չեր կարելի տալ : Քիչ և, ասկա պետք և հավասար բաժանել : Իսկ ավելի շատ տալու միջոցներ չուներ Խորհրդային յերկիրը, վոր հերոսարար հետ եր մզում ամեն կողմից նեղող ներքին և պատաքն հակահեղափոխական ուժերին :

— Թաղմական կոմմունիզմի շրջանում աշխատանքի ամենա-

առուրին և ամենաբարձր վարձատրության միջև հարաբերականությունը 1:4 էր : Բացի այդ, ինքը ցանցը բաժանվում էր վոչ թե 17 կարգի, ինչպես այժմ և, այլ 35: Կարգերի միջև զանազանությունը չափ փոքր էր, առենք, 9-րդ կարգի բանվորը համարյա չեր ել զգում, վոր նու 6-րդ կարգի բանվորից ավելի յէ ստանում: Բացի այդ, բայ աւարիֆային ցանցի, բաշխվում էր միայն աշխատավարձի դրամական մասը փոքր փայը բոլորի համար միատեսակ էր : Վերջանական հաշվով գուրս էր գալիս, վոր ձեռնարկության համ հիմնարկության բարձրագույն զեկավարը վոչ թե 4, այլ ընդամենը միայն 1-ու կես անգամ էր ավելի ստանում, քան ամենից քիչ վարժված բանվորը: Ինդպէին զարմանալի չե, վոր ավելի քիչ պիտակից վորակյալ բանվորների նշանակալի մասը չեր բարձրագում այլպիսի կարգերով: Չնայած հայտարարված ընդհանուր աշխատանքային պարհակին, չափ սովորած բանվորներ թողնում եյին դրդաբանները և հեռանում եյին ավելի կուշտ դրուզը:

— Խաղաղ շնաբարության, նոր անտեսական քաղաքականության անցնելը, թույլ տվեց լրջորեն զբաղվելու մեր արդյունաբերության վերածնունդով: Պետության միջոցները անցնին: Նորից բարձրացավ այն հարցը, թե ինչպես վարձատրել բանվորներին: Մի կողմից, պրոլետարիատի ղեկասառւրայի յերկրում աշխատավարձի մինչպատերազմական կարուկ զանազանությունը վերականգնելը կարծեք թե տեղին չեր: Զե՞ վոր, բայ եյության, ամեն մի աշխատանք արագ բռնիւթյան մեջ իր անգում անհրաժեշտ ն, իսկ հասարակ բանվորի կենսական պահանջները յերեք 6 անգամ պակաս չեն բարձր-վորակյալ փականակազործի պահանջներից, վոչ եւ 15—20 անգամ պակաս ինժեների օգահանջներից: Բայց մյուս կողմից, ստիպված եյինք հաշվի առնել ահա թե ինչ կատարած լիքմը մեզ չափ ծանր ժառանգություններ էր թողել: Երանցից մեկն այն է, վոր մեր գեռես քիչ կույտուրական յերկրում վարժված բանվորները պակասում են: Մինչդեռ առանց լավ վորակյալ բանվորի անկարելի յէ արտադրությունը վերականգնել: Ստիպված եյինք տարիի փային ցանցը այնպես կառուցել, վորպեսպի կարելի լիներ վորակյալ բանվորներին ձեռնարկություն վրավել, վորպեսպի բանվորը ստանար այնքան ավելի չափ, ինչքան ավելի սովորած է, ինչքան ավելի չափ սովոր կարող է բերել ձեռնարկությանը: Դրա հետ միասին վարձատրության այսպիսի յեղանակի ժամանակի ժամանակի ամեն մի բանվոր կը ձգտեր ինչքան կարելի յէ լավ աշխատել:

անցնել բարձրագույն տարիֆային կարգը, հասնել բարձրագույն վորակման և այլպիսով ելապես բարձրացնել իր գատումը:

— Հին ցանցը գրա համար պետքական չեր: Այդ պատճառով՝ 1921թ. ՀԱՄԿի իր «տարիֆային հրահանգով» նոր տարիֆային ցանց հաստատեց 17 կարգով: Ակզրում ցանցի առաջին և վերջին կարգի միջն հարաբերականությունը 1:5 էր, բայց հետո անհրաժեշտ դարձավ այդ հարաբերությունը ել՝ ավելի հեռացնել: 1923թ. աշնանը ՀԱՄԿի իր պլենումի հերթական նստաշրջանում վերջանեական հաստատեց, վոր աշխատանքի արտադրողականության բարձրացման շահերի տեսակետից պետք և ցանցի հարաբերականությունը լայնացնել մինչև 1:8: Կարգերի քանակը վճարվեց առաջվանը թողնելով՝ 17, բայց նրանցից ամեն մեկի համար սահմանել հաստատուն, բոլոր միությունների համար սպարագիր կոեֆֆիցինաներ:

— Ստացվեց ՀԱՄԿի այսպես կոչված, տիպական տարիֆային ցանցը, վոր բնողութեան բոլոր միությունները և վորը գեանդված և նաև մեր հավաքական սպարմանագրի § 13:

— Բայց այստեղ կարող է ուրիշ հարց ել ծագել. ինչու՝ անվարժ բանվորի գատումը այնքան ըբարձրացնենք, վոր նա համարվի վորակալայի գատումին:

— Երդյոք մենք կարո՞ղ ենք այդ անել աշխատանքի արտադրողականության ամեն մի բարձրացման հաշվին: Վո՞չ, չենք կարող: Այն ժամանակ բանվոր գասակարողի կյանքի մակարդակը քաղաքում խիստ կը բարձրանա, իսկ զյուղացու կյանքի մակարդակը հետ կմնա, վորովհետեւ արդյունաբերության բոլոր միջոցները աշխատավարձի վրա կը գնա, իսկ արտադրության լայնացման, զյուղին պետքական ասղանքների եժանացման մասին վոչ վոք չի հոգտ: Դրա հետ միասին զյուղից քաղաք կթափի զործողութեների հսկալիքը՝ բարձր գատում վարուելու:

— Այս բոլորի ծանր հետևանքները մեր ժողովրդական տընտեսության համար ակնհայտ են: Անվարժ բանվորների աշխատավարձի բարձրացումը հնարավոր կը լիներ միայն մեր արդյունաբերության ահադին վաստակների համար պետք և չարտաս գնորդ: Այդպիսի բարձրաթիվ և հարուստ գնորդ կարող են հանդիսանալ ամենից առաջ մեր զյուղերը, մեր զյուղաւընտեսությունը կամքանա: Նշանակում ե, բանվոր

դասակարգի բարեկեցությունը քաղաքում հենվում և մեր գյուղատնտեսության բարձրացման հարցին :

— Վերջին ժամանակներս լրջորեն զրված և այն կարեռը հարցը, վոր միասնական, տիպական տարիֆային ցանցը արդեն անպետք է և ճնշչէ : Մեր արդյունաբերությունը բուռն կերպով զարգանում է : 1924/25 թ. հասավ մինչաստերապմական մակարդակի՝ 71 %, իսկ 1925/26 թ. կը հասնի 95 % :

— Մեր ժողովրդական տնտեսության մեջ պետք է հարցուր հազարավոր բանվորներ մանեն և ընդունել բանվորներ, իսկ նրանց մեծ մասը (մոտավորապես 250,000 մարդ) չգիտենք, թե վորտեղից ենք հարելու : Հասակավես ծանր վրության մեջ են գտնափառ արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպես մետաղուդրծականը, մանածագործականը, պոլիգրաֆիականը, հանքայինը և մասամբ քիմիականն ու կազմվենինը : Իսկ ինչ վերաբերում ե դրծագուրկների բանակին, վոր մեզ մոտ հասել է 1,000,000 մարդու, ապա գդվար և ոգտագործել նրան, վորովհետեւ նրա 50 % կազմում են հասարակ բանվորները, 31 %—ծառայողները և միայն 19 % արդյունաբերական բանվորները, այն ել վաստ վարժվածները : Այնպես և գուրս գալիս, վոր մեր ժողովրդական տնտեսության մի ամրող շարք ճյուղերում վորակյալ բանվորը իրոք ավելի շատ և սունտեմ, քան նրան հասնում և ըստ տարիֆային ցանցի, վորովհետեւ նրա պահանջը մեծ է, իսկ առաջարկը փոքր : Սրան պետք է ավելացնել նաև մասնագետների վարձատրության հարցը, վարոնք չափ քիչ են մեզ մոտ : Մասնագետներն առաջ ել մեզ մոտ ընդհանուր տարիֆային ցանցի մեջ չելին զետեղվում : Երանք ստանում են այսպես կոչված «մասնագետների կովարներ» («ըպետացք»), տնտեսական սրգանների հետ հասուկ պայմանագրերի համաձայն, պրեմիաներ, հավելումներ և այլն : Զնայած միությունները Աշխատողկոմատի որդանների հետ միասներ հետեւ հարաբեր կովարների հաստատման ճշտությանը, այնուամենայնիվ այսեղ քմահաճույքը և խառնաշփությունը մեծ են : Ահա թե ինչու մեր միութենական բարձր սրգանները ներկայումս զրել են ՀԱՄԿԸ տիպիկ միասնական տարիֆային ցանցից հրաժարվելու հարցը : Յենթաղը վաստ վարժված է հետեւյալ վորովհետեւ մասնել—ՀԱՄԿԸ ցանցի բանվորական մասը հասցնել մինչև 10 կարգի (համաձայն ՀԱՄԿԸ կից վորակման հանձնաժողովի վճռի) ։ 1:4 Հարաբերականությամբ :

Դրա հետ միասին նշված և հաստուկ տարիքային ցանցի ժուժումը, վարը հաստատուն կը նողը կի ամրող վարչությունը և մասնագետներին։ Այդ տարիքային ցանցի կարգերի հարաբերականությունը մոտավորապես կը լինի 1:3 կամ 1:4։ Բնդվորում արգախի տարիքային ցանցի առաջին կարգի կոպարը իր մեծությամբ 10—15 % ավելի բարձր կը լինի արդյունաբերության ավլյան ճյուղի ամենամուրակյալ բանվորի կոպարից (այսինքն այն բանվորի, զոր ՀԱՄԿից ցանցի բանվորական մասի 10-րդ կարգով և ստանում)։

Առանձնահատուկ զրության մեջ են ներկայաւում խորհրդադիրների ժառանգները։ Բանն այն է, վոր խորհրդային հիմնարկությունների մեջ հավաքական պայմանագրերը իրենք իրենց շարդարացըրին։ Այսպես, որինակ, Հողբաժինը տմուր կերպով ապօռում է բյուջեյով և հիմնարկության դեկավարը չի կարող ընդունել աշխատավարձի ավելի բարձր կոպարներ, քան այն, վոր նրա հիմնարկության համար վորոշել և ֆինանսիսմը։ Կամ այսպես եր պատահում — միությունը միհնույն հավաքական պայմանագիրը կնքում եր մի քանի խորհրդային հիմնարկությունների համար, բայց պետական և տեղական բյուջեն այդ հիմնարկություններին զանազան գումարներ ելին բաց թողնում, և աշխատավարձը խոտիվ փոխվում եր, չնայած աշխատանքի պայմանները այնուղ միասեղանություն է ելին։ Այսպիս եր զուրս գալիս, վոր մի խորհրդային հիմնարկություններին իր ուղած ձեռվ և դործում, պետությունը չի մրւածում — 54 ո., մեքենագրուէին — 25 մինչև 100 ո., մատենավարը — 29 մինչև 79 ո. և այլն։ Այսպիսի պայմաններում, յերբ ամեն մի հիմնարկություն իր ուղած ձեռվ և դործում, պետությունը չի կարող ճշարեն կարգավորել իր աշխատավորների աշխատանքը։ Ահա թե ինչու կենագործկումը ՀԱՄԿի համաձայնությամբ վերացրեց հավաքական պայմանագրերը խորհրդային ծառայողների համար և մայրեց աշխատավարձի պետական նորմայի յենթարկում, այսինքն ամեն մի վորոշ պաշտոնի համար հաստատուն ոսճկաչափ ստամակեց։

— Խորաշխի միությունը մեր խորհրդային որդանների հետ միասեղ մեծ աշխատանք պիտի կատարի, վորապեսի ձիւտ և լրիվ կերպով սահմանի պաշտոնները, ինչպես և վորոշի ֆոնդերի չափը կենարունում և տեղերում։ Իսկ ի՞նչ վերաբերում է մնացած ծառայողներին — առեւտրային ծառայողներին, մեր որեստների և որն-

տեսական որդանների վարչական ազգարատի ծառայողներին, ազգա նրանց մու մնում և հավաքական պայմանագրեր կնքելու նոխիլին կարգը : Յեկ լրոք, ծառայողների այդ մասը չի աշխատում այնպիսի հիմնարկություններում, վորոնք ապրում են պետական կամ տեղական հաստատուն բյուջեով :

ԲԱՆՔԸՐՆԵՐԻ ՏԱՐԻՖԻ — Սակայն լավ տարիֆային ցանց ԿԱՅՁԱՅՆ : մշակելը քիչ ե, ցանց, վոր ընդդրկում և բանվորների և ծառայողների բոլոր

կարգերը, անհրաժեշտ է կարողանալ այդ ցանցը կենսագործել հենց ձեռնարկության մեջ : Պետք է խնամքով ստուգել գործարանի բանագործների վորակումը, ազգա բաշխել նրանց ըստ կարգերի : Գործարանի համար չափարար չափարարի կը լինի, յեթե վատ սովորած բանագործները ավելի բարձր կարգերում գրգին, քան այդ պետք ե : Յեկ ընդհակառակը, գործունյամ, վորաճած վորակյալ բանվորը, վորի կարգը չեն բարձրացնում, յերբ արժանի յե, կորցնում և շահագրդությունը դեպի աշխատանքը և աշխատանքի բավարար արտադրությանը մեջ չեն չափարար չափարարի մասնակիլ այլ աշխատանքը : Առաջներն այդ բաժանումը կամաց հաջող է այս բաժանումը կամաց հաջող բացառապես իրենք միությունները, բայց նոր տնտեսական քաղաքականության ըլլանում, արտադրության միանձնյա կառավարման ըլլանում, հարկ յեղավ հարաժարի գրանից : Եերկայ յուրաքանչյուր կամարած աշխատանքի համեմատ վարչության կողմից բաշխվում են համապատասխան տարիֆային կարգերով համաձայն աշխատանքների և պաշտոնների բաժանման, վոր կցված են պայմանագրերին, իսկ դրանց բացակայության դեպքում, ըստ զնահատում-կանոնի կամարած հանձնաժողովի բաժանման : Հասկանալի յե, վոր արդիքիկացնելի (սակառակության) այս աշխատանքում միություններն այժմ ել խիստ մեծ մասնակցություն են ունենաւ : Այդ աշխատանքը չափ կարենը և թի տնտեսական որդանների և թի միությունների համար : Յեթե ուղարկման կոմմունիդմի չը չանում, յերբ բանվորի աշխատավարձը չափ ցած եր, միությունները յերբեմն համաձայնում եյին, վոր բանվորները և ծառայողները մի կարգից մյուսը «չվեն», ազգա ներկայումս անթույլատրելի յե այդ : Արտադրության կազմակերպության շահերը պահանջում են, վոր բանվորը և ծառայողները նշտորեն, խստիվ բաշխվեն ըստ տարի-ֆային ցանցի : Այդ բույլ և տալիս նշտորեն ուստագործել ամեն մե-

կին համաձայն նրա վորակման և այդպիսով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, հետեւաբար և եժանացնել արտադրությունը : Այդ բաժանումը և բաշխումը հեշտացնելու համար ՀԱՄԿԵ ներկայումս մշակել ե այսպես կոչված «միասնական տարբիՓ», այսինքն տեղեկատու արտադրության բոլոր տեսակների մասին, վոր ճշգրիտ կերպով ցույց է տալիս, թե վոր կարգի մեջ պետք ե դնել այս կամ այն աշխատանքը կատարող բանվորին կամ ծառայողին :

— Բայց ահա բանվորը գործարան մտավ, վորոշ կարգի մեջ դրվեց և սկսեց աշխատել : Արդյոք կարելի՞ց յե նրան բարձր կարգից ցածր տեղափոխել ե վո՞ր դեպքերում : Համարական պայմանագրի § 12 ճշգրիտ կերպով հիշատակում ե, վոր տեղափոխության պայքար կարող ե լինել «ա» վոչ հարգելի պատճառներով շատ անզամ արտադրանքի նորման (норма выработки) չը կատարելի . բ) սահմանած կարգի համապատասխան աշխատանքին անպեսք լինելը, յերե այդ անպեսք լինելը պարզվում է աշխատանքի պրոցեսում, աշխատադի կարգը սկզբանի վորոշելուց հետո» : Յեզ մերջապես, յեթե գործարանում աշխատում է, առենք, զողովը (сварщик) վորը գիտե նաև դարբնություն, իսկ համքարության մեջ այլին զոցով պետք չե, պետք ե միայն դարբին, այն ժամանակ զողովը դարբին ե դառնում և պետք է ոռնդիկ ստանա ավելի ցած կարգով : Այն դեպքում, յերբ նա չհամաձայնի այլպիսի անցումի, տնտեսական որդունը իրավունք ունի նրան արձակել՝ վճարելով շարաթված փոխհատուցում : Բայց յեթե համաձայնին, սպա այն ժամանակ, ըստ համարական պայմանագրի, նու իրբե ցած կարգը փախադրվելու համաձայնություն տվող, փոխադրությունից հետո շարաթված բնթացքում ստանում է իր գատումի միջինը ստաջվա կարգով» :

— Բացի այս վերջին վերաստանումից, վոր պաշտպանում և բանվորի շահերը, ավելորդ չե հիշեցնել «Աշխատանքի Որենսողըրթ» 62 հողվածը . «Զանազան վորակման աշխատանքներ կատարելիս, վարձվողը բարձրաբարույն վորակման աշխատանքի համեմատ և վարձապրում : Այսինքն, յեթե դարբինը՝ վոր միաժ ամանակ զողովը և, կատարելը մի աշխատանք, սպա նա պետք ե վարձասարպի այն կարգով, վորով ստանում և ավելի բարձր վարակումը, այսինքն զողովը : Վարչության վորեւ քմահաճույք կանխելու համար . այդ բոլոր փոխադրությունները մի կարգից մյուսը, ըստ պայ-

մասնագրի § 12. կարող են տեղի ունենալ բացառապես գնահատու-  
կունիվիկտային հանձնաժողովի վճարի համաձայն :

**ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԵԼԻ** — Այժմ՝ մէնք պայմանագրերում՝  
(ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՅԵՎ ՎՈՍ գրում ենք. «առաջին կարգի տարի-  
ի թուիթի») : ՎՃԱՐՄԱՆ Փային կոպարը 10 ո. և վուկի ուուր-  
դԱՄԿԵՑՆԵՐԸ : լով», իսկ առաջ այլ կերպ եցին ա-  
սում. «Յ ուուրլի պայմանական ապ-  
բանքային ուուրլով» : Դրամական ունֆորմի հետ միասին ընդհատվեց  
աշխատավարձը ապրանքային ուուրլով հաշվելը, բայց զուրք, ի հար-  
կե, հիշում եք, թե իր ժամանակին ինչ մեծ դեր խաղացին այլ  
«ապրանքային ուուրլիները» :

— Ի՞նչ ինդիք եր կանոնած այն ժամանակ միությունների ա-  
ռաջ՝ Ծանր ավերմունքի պայմաններում, խորհրդային դրամանիշի  
անդամները արժեքայրկման պայմաններում, պահպանել բանկուրի  
իրական աշխատավարձը պահել այսպիսի բարձրության վրա, վոր  
ավելի կամ պակաս մասին լինի ապրուստի նվազագույն չափին:  
Այդ ինդիքը վճռվեց հենց ապրանքային ուուրլու մուծումով: Ապ-  
րանքային ուուրլու հիմքը կազմում է առաջին անհրաժեշտության  
մթերքների և առարկաների արժեքը: Հաստատվեց, վոր Մոսկվա-  
յում նախապատերազմական ժամանակ այն մթերքների և առարկա-  
ների հավաքածուն, (և ճօր), վորը կազմում եր բանկուրի ամ-  
սական ապրուստի նվազագույն չափը, արժեքը 10 ուուրլի վոսկով:  
Այդ բանկուրի, այսպես սահման, ամենանետան, համարյա քաղցած  
բյուջեն եր: Յեվ ահա այդ մթերքների հավաքածուն, վոր Պետ-  
ողանիր հաստատեց\*), հենց կոչվեց «Պետականի բյուջետային հա-

\* ) Բերում ենք Պետականի բյուջետային հավաքածուի  
կազմը (1924 թ. նույնի).

ա) մնագի առարկաները՝ համարի ալյուր 1 փութ, կարտո-  
ֆիլ 0,95 ֆ., ցորենի ալյուր կես ֆ., կրուզա 7 ֆ., թթու դրամ  
կազմը 8 ֆ., սխ 7,8 ֆ., ձակնողի 4 ֆ., յու. կ (կոզի) 1 ֆ.,  
ձու 3 հատ, կաթ 5 ու կես շիշ, սոխ 1,7 ֆ., պատու յուղ 1,7  
ֆ., տառեփ (օօլիմ) 3 ֆ., աղ 2 ֆ., շաքար 2,7 ֆ.:

բ) Առաջին անհրաժեշտության առարկաները՝ վայր 6  
փութ, կերասին 6 փունտ, չիթ 2,2 արշին, քաթան 0,7 արշին,  
մահուղ 0,16 արշին, հասարակ սապան 1 ֆ., հասարակ կոշիկ  
0,07, լուցկի 3 տուփ, մախորկա մեկ ու կես փունտ:

«վաքածու» և նրա արժեքն ել նույն 10 ո. ընդունվեց, բայց միայն սկսեցին «10 ապրանքային սուրլի» կոչել այն:

— Ամիսը շորս անդամ, 1-ին, 8-ին, 15-ին և 22-ին տեղական վիճարություն չուկան չըջող գործակալների միջացով հաստատում եր բյուջեային հավաքածուի մեջ մտնող մթերքների և առարկաների արժեքը խորհրդային դրամանիշերով տվյալ թվի համար: Այսպես, որինակ, Աղեսայում 1923 թ. մայիսի 1-ին բյուջեային հավաքածուն արժեքը 600 ո., իսկ նոյեմբերի 1-ին 9,020 ո. խորհրդային դրամանիշերով: Յեթի բյուջեային հավաքածուի արժեքը բաժանենք 10-ի վրա, ապա ստացած թվունաշանը ցույց կատ, թէ քանի անդամ մթերքներն ու ապրանքները խաղաղ ժամանակը համեմատությամբ թանկանում եյին: Այդ թվանշանները կոչվում են նաև ապրանքային ոուրլի: Հավաքական պարմանազքերում աշխատավարձը հաշվում եյին բյուջեային հավաքածուի տոկոսներով (որինակ՝ առնում եյին բյուջեային հավաքածուի 80 տոկոսը առաջին կարգի համար առ 1-ն նոյեմբերի 1922 թ., այսինքն 9,020 ո. 80 տոկոսը, վոր առնում եր 7,216 ո. խորհրդային դրամանիշերով): Այսպիսով ստացվում եր աշխատավարձի այսպես կոչված «անորդ շարքը» ( Ա Կ Ա Լ Ա ) : Ինչքան թանկանում եր մթերքների, ապրանքների արժեքը, այնքան ել բարձրանում եր Պետության բյուջեային շարքի արժեքը, նրանց հատեկից վերև սահերթ:

— Ապրանքային սուրլին բանկորի աշխատավարձն անկուտից ապահովագրում եր: Սակայն նա միենաւին ժամանակ շտատ անհարժարություններ և թերութուններ ուներ: Զենարկության հաշվետվությունները սովորաբար կատարվում եյին թէ ապրանքային, թէ վոսկե սուրլիներով և թէ խորհրդային դրամանիշերով: Ապրանքային և վոսկե սուրլի կուրսը բավական փափոխական եր: Այդ նշանակալի գժվարություններ եր սուեզծում թէ տնօտեսական որդանների և թէ բանվորների համար: Դուք ինքներդ զեռ հիշում եք, թէ ինչքան եյթ կարցնում, որինակ, այն դեպքում, յերբ աշխատավարձը ուշանում եր: Միայն դրամական ոեֆորմը, վոր հաստատեց հաստատուն վոսկե սուրլիներով հաշվելը, պարզություն

կոմմունալ ծառայություններ— բնակարանային տարածություն 1,2 քառ. սամ, ելեքտրական հներգիա կես կելովասաժամ, ջուր 50 դույլ, ելեքտրաքարչի տոմս 6 հատ:

Կուլտուր-լուսավորական ծախքեր— թերթ 6 համար, կիսոյի 2 տոմս :

մտցրեց ձեռնարկության տնտեսական հաշվետվության մեջ և վերջնականապես արակովից բանվորին և ծառայողին նրանց դատումի մի արժեքագրությունը :

— Մինչեւ այժմ մեր վորոշ բանվորները և ծառայողները ապրում են գործարանային աներում, ողափում են վառելիքով ու լուսավորությամբ ի հաշիվ գործարանի : Իհարկե, այդ նույնպես աշխատավարձի պես մի բան է, այդ պատճառով արդարացի յև համարական պայմանների §14, յերբ մտնանչում է, վոր «գործարանային վարչության արած ծառայությունների համար (բնակարան, լուսավորություն, վասելիք, ջրմուղ, կանալիքացիա և այլն) աշխատավարձից հանվում է միության հետ համաձայնության գալով», բայց վոչ բարձր կոմմունալ տնտեսության զներից» :

— Խսկ ի՞նչ ժամկետներում և վեարվում աշխատավարձը : Այդ մասին խոսում ե § 15. «Եշխատավարձը վճարվում է ամիսը 2 անդամ, — վոչ ուշ ընթացիկ ամսի 20-ից մեր ձեռնարկության մեջ վճարվում է տարիի վային կոպարի 80 %, խսկ վոչ ուշ հետիշալ ամսի 5-ից կատարվում է վերջնական հաշվեհարդար ամբողջ ամսի համար» :

**ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԶԵՎԵԲԸՆ՝ ԺԱՄԿԵՏԸՆ ԺԱՄԿԵՏԸՆ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԸՆՔ.**

— Բանվորների դատումը վճարելու

ժամկետների հաշվապահությունը և հումկունը, ինչպես զիտեք, ոռօնկա-

գուցակը .

հումկունը, ինչպես զիտեք, ոռօնկա-

ցուցակ և կազմում : Ցեղե դուք նայեք այդ ոռօնկացուցակը, ապա կը տեսնենք, վոր բոլոր բանվորների և ծառայողների աշխատավարձը միատեսակ հիմունքներով չի հաշվում : Արինակ՝ գործվարը ստանում է հաստատուն սահմանված ամսական կոպարով, ամենք—50 ռ., հաշվապահը—62 ռ., անկախ նրա կատարած աշխատանքի քանակից : Դա կոչվում է ժամանակավարձ : Հավաքական պայմանագրի § 16 համաձայն «աշխատների ծառանավարձով վճարումը բույլատրվում է այն աշխատանքների վերաբերմամբ, վորոնիք դժվարությամբ են յենքարկվում նորմայի ուրեմն և հաշվառման : Այդ պատճառով նա տարածվում է միայն ծառայողների վրա, ինչպես և ոժանդակ համքարությունների բանվորների վրա : «Մնացած բոլոր գործերի համար», — առվում է համապահական պայմանագրում, — «աշխատանքը գործավարձով և վիճակում» : ՅԵՎ, իբոք, ոռօնկացուցակներում մատնանշվում է վոր գործավարձով աշխատանքը այսքան ժամի համար, այնինչ արտադրանքը

նորմայի կատարման համար ստանում և այսքան դումար : Ապա մի ժամանական քնննենք այս : Ի՞նչ է արտադրանի նորման( հօրմա վարելու) , ՅԵՆԹԱԴՐԵՆՔ , զոր բանվորական որվա ընթացքում , այսինքն 8 ժամվա մեջ , բանվորը , մետաղագործ ճախարակագործը , կարող է 48 կիսադյումանոց պատուակի գլուխ ( բայց ) չինել : Նշանակում և մի ժամում նա կարող է 6 պատուակի գլուխ չինել : Այդ այն նորման է , զոր նա պիտի կատարի : ՅԵՆԹԱԴՐԵՆՔ , թե նա վարձատրվում է 8-րդ կարգով , իսկ առաջին կարգի կոպարը 10 ո . և , այսինքն նրա տարիֆային կոպարը ամսական 31 ո . և : Բանվորական ամիսը 24 որ և ընդունվում , որական ութ ժամով կլինի 192 ժամ : Նշանակում և ճախարակագործը 1 ժամ աշխատանքի համար ստանում է 16,2 կոպեկ : Հենց այդ ել նրա տարիֆային կոպարն և մեկ ժամվա համար : Մեկ ժամում նա կարող է 6 պատուակի գլուխ չինել և զրա համար ստանալ 16,2 կոպեկ : Նշանակում և ամեն մեկ շինած պատուակի գլուխ համար նա ստանում է 16,2 կ . : 6 համաստր և 2,7 կ . : Այդ ել կինին նրա գործային գնահատումը մեկ պատուակի գլուխ համար : Կարելի յե այլ կերպ ասել .— ճախարակագործի փոք թե մեկ ժամվա , այլ մեկ որվա տարիֆային զատումը , փոք թե մեկ ժամվա , այլ մեկ որվա արտադրանքի նորման և նույնպես բաժանել մեկը մյուսի վրա , հետևաելքը , հասկանալի յե , նույնը կլինի , ինչ փոք վերիքը : Հենց այդպես ել վարդում և մեր հաղաքական պարմանագիրը , § 22 ասելով .«Գործային գնահատումները փորչում են որական—անկախ բանվորական որվա տևողությունից տվյալ կատեգորիայի բանվորների համար— փոսկե ուուրլիներով արտահայտված տարիփային կոպարը բաժանելով սահմանած որական գործածի նորմայի վրա հասերով , փրեռավ և այլն» :

Հասկանալի յե , զոր յեթե , որինակ , հասարակ բանվորը , զոր զրադված և վնասակար ստորերկրյա արտադրության մեջ , մի որ աշխատի , ապա նրա մի ժամվա արտադրանքի նորման սահմանվում է փոք թե ութ ժամի վրա բաժանելով , այլ վեց ժամի , զորովհետեւ ստորերկրյա աշխատանքների համար սահմանված և կարճ բանվորական որ : Այսպես , յեթե հանքահանը ամիսն արդյունահանում և 3168 փութ ածուխ , ապա նրա մեկ ժամվա արտադրանքի նորման պետք և վորոշել փոք թե 192 ժամի , այլ 144 ժամի վրա բաժանելով , այսինքն ժամվա մեջ կը կազմի 22 փութ : Իսկ յեթե հանքահանն ըստ իր տարիփային կարգի ամսական , ամենք , ստանում է 31 ո . 68կ . , ապա մեկ ժամի համար նա կտանա 31 ո . : 114 հավասար է 22 կոպեկ , իսկ մեկ փթէ

Համար — 1 կոսկեկ<sup>9</sup>) : Այս մասին ել հենց խոսում և հավաքական պայմանագիրը «Վճառակար արտադրությունների մեջ զբաղված անձերի գործային զնակառությները սահմանվում են միևնույն կարգով, բայց ռաժանանշով նրանց քանիդրական որվա համեմատական արտադրանքի նորմայի վրա» : Խոկ անշափահասները ստանում են հասակավորների հետ միևնույն գործային զնակառությներով, լրացնցիչ վարձասրությամբ կրնատած ժամերի համար՝ համաձայն իրենց մեկ ժամկան արդիքային նորմայի : Բնդումին պիտի և նկատի ռանենալ, վոր յերբ ճախարակադործի գործային աշխատանքի համար կամարում և զարրին և կատարում և այն, ինչպես հարկն է, ապա նաև վարձասրում և վոչ քեզարքի, այլ ճախարական գործային ասարիֆային կարգով, վորովհետեւ ըստ Հավաքական պայմանագրի «գործային գնահատումները վորոշվում են աշխատանքի և վոչ քեզ աշխատանքը կատարող անձի կարգով», վոր իշարեկ, լիովին արդարացի յե :

— Այժմ մի ուրիշ հարց — ինչպես վորոշել վորեն ավելի բարդ մասի ( դետալ ), ամբողջ առարկայի գործային գնահատանքի վոր բանվորը հանձնել և գործային աշխատանքի հիմունքներով : Ասենք ճախարակադործ բանվորին տված և մի մաս շինել : Գնահատիչ-կոնֆլիկտային հանձնաժողովի Հաշիվներով այդ աշխատանքի կատարման համար անհրաժեշտ և 10 ժամ : Ճախարակադործ բանվորը, ինչպես մենք գիտենք, աշխատանքի ամեն ժամի համար ստանում և 16,2 կ . տարիֆային կուգար : Հետևաբար տվյալ մասի գործային կատարման համար նա ստանում է 16,2 × 10=1 ր . 62 կ .

— Գործային գնահատումների սահմանման մեջ մէծ դիր և խոր զում գնահատուիչ-կոնֆլիկտային հանձնաժողովը : Զնայած բոլոր զործային զնակառությները վարչությունն և մշակում, բայց ևսուն նրանի անպայման հատատվում են ԳԿՀ կողմից : Խոկ ինչի՞ պիտի այս գործային ամբողջ սիստեմը : Զե՞ վոր մէնք հիշում ենք, վոր հեղափոխությունից առաջ բանվորները կովում ենին նրա դեմ, իսկ այժմ Խորհրդային իշխանությունն ժամանակակի ամենուրեք մտցնում են այն : Բայց բանն այն է, վոր կապիտալիստական կարգի ժամանակ գործային սիստեմը չափազանց ոգտակար էր գործարանատերերին և ֆարբեկանաներին : Բանվորը գրոշներ ստանալով, ձգտում էր ինչքան կարելի յե շատ զատել, ինքն իրեն

<sup>9)</sup> Թվերը մոտավոր են :

ամբողջ բանվոր դասակարգի մի մաս, արհմիությունները հոգում ևն խորհրդային արլեյունարերության բոլոր կարիքների մասին, ամեն ջանք դործադրում են հանրապետության ժողովրդական անտեսության ամբացման և վերածնման ու դրանով իսկ պրոլետարիատի դիկտատորայի ամբացման համար: ԽՍՀՄ բոլոր պետական ձեռնարկության բանվորները զգում են, վոր այդ ձեռնարկություններն իրենց սեփական բարիքն են, վոր արտադրությունը լավացնելու ամեն մի քայլ նրանց սեփական դրությունը լավացնելու մի քայլ և, վոր ԽՍՀՄ՝ բոլոր աշխատավորների առաջնանք մէծագիս պատանիանատու յեն իրենց Փարբիկայի կամ գործարանի դրության համար:

Ի հարկե, արհմիություններն անմիջականորեն արդեն չեն խանճում արտադրության կառավարմանը, ինչպես ուազմական կոմունիզմի շրջանում, սակայն Նեղ-ի պայմաններում ել նրանց վրա ընկնում և շափականց մեծ աշխատանք՝ արտադրության ուսումնասիրության և լավացման ասպարիզում:

Մենք արդեն վերը ցույց ամեցինք, վոր գյուղացիությունը մինչև վերջ բանվորության հետեւց կերթա միայն այն ժամանակ, յերբ համոզվի, վոր բանվորական պետությունը նրան ավելի եժան և ավելի լավ գործարանային ազրանքներ և տալիս, քան հին ժամանակ եր: Բայց այդ, անհրաժեշտ և, վոր մենք ձըդտենք աշխատավարձի հետագա բարձրացմանը, վոր արտադրության մի շարք ճյուղերում դեռ բավականաչափ բարձր մակարդակի վրա չե: Թե՛ մեկը և թե՛ մյուսն իրազործել, այսինքն՝ քաղաքի և գյուղի միջև կազ հաստատել և միաժմտանակ բանվորի դատումը բարձրացնել, մենք կարող ենք միայն մի յեղանակով — աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելով:

Ի՞նչ են ասում այդ մասին թվերը: Բանվորա-Գյուղացիական Ժեսության ժողկոմատը և կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովն աշխատավարձի հատուկ հանձնաժողով ևյին ընտրել, վոր հետազոտություն կատարեց մեր արդյունարերության մի շարք կարեռադույն ճյուղերում: Ենք բանից յերեաց, վոր մինչդեռ մեկ բանվորի որական միջին արտադրանքը (выработка) 1922 թվի հոկտեմբերից մինչև 1924 թվի հունվար տմիսն ամել ե 4 ո. 38 կոպեկալ, այսինքն՝ 23,3 տոկոսվ, նույն ժամանակում մեկ բանվորի որական միջին դատումը բարձրացել ե 37,8 կ. մինչև 70,3 կ., այսինքն՝ 90 տոկոսվ: Ճիշտ և, պետք ե նկատի ունե-

նանք, վոր 1923 թվին բանվորի աշխատավարձը դեռ այնքան ցած եր, վոր անհրաժեշտ եր կորուկ թոփչք դեպի վեր, վորպեսզի կարելի լիներ գոնե մասամբ անցնել քաղցած մակարդակը և թույլ տալ բանվորին, վոր իր արտադրողականությունն ե'լ բարձրացնի: Բայց, այնուամենայնիվ, խորհրդային յերիտասարդ արդյունաբերության համար «այս թվերը—23,3 տոկոս և 90 տոկոս իրենց մեջ մեծագույն սպառնակի են քաղցնում» (Բան-Գյուղատեսչության ժեղագույն ապահովագույն բանական պահանջման մեջ): Ամեն մի բանվոր պետք է իմանա այդ և ամեն մի բանվոր իր, արհմիության հետ միատեղ պետք է դրանից համապատասխան յեզրակացություն կարող ե լինել—անհրաժեշտ է, ինչքան կարելի յէ, ավելի մեծացնել ձեռնարկության արտադրողականությունը, մասնավորապես նաև ամեն բանվորի արտադրանքի նորման բարձրացնելու միջոցով: Աշխատանքի արտադրողականությունը պետք է աշխատավարձի անումից ավելի արագ մեծանա և հենց աշխատավարձն անհրաժեշտ է բարձրացնել քացառապես աշխատանքի արտադրողականության աճման ենու միասին:

Հենց առաջին հերթին, արհմիության ջանքերն այս կողմը պետք է ուղղվին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԼԱՐՎԱԾ- Ասենք, որինակ, մի ձեռնարկություն, կութօնին: Թյուն, վորի մեջ նախապատերազմական ժամանակ ամեն ամիս 300 հազար ոռություն ապրանք եր արտադրում, ընդ վորում ձեռնարկության մեջ 1000 մարդ եր աշխատում: Նշանակում է՝ ամեն մի բանվորին ընկնում եր 300 ոռություն արտադրանք: Այժմ նույնպիսի մի ձեռնարկությունը նույնքան բանվորով ամսական հաճախ միայն 150—180,000 ոռություն ապրանք ե բաց թողնում: Հետևաբար՝ մեկ բանվորին ընկնում ե վոչ բարձր, քան 150—180 ո. արտադրանք, այսինքն՝ նախապատերազմականի 50—60 տոկոսը: Բանք ի՞նչումն ե:

Առաջին յենթադրությունը կարող ե լինել այս —բանվորն իր ուժերը բավականաչափ չի լարում, նա աշխատանքի չափազանց ցած նորմա յի կատարում, մինչդեռ նախապատերազմական ժամանակ նա բարձր նորմաներ եր կատարում: Բանվորի աշխանքի լարվածությունը քչացել է, նշանակում ե, ձեռնարկության արտադրողականությունը բարձրացնելու համար պետք ե, ինչպես

Հարկն եւ բեռնել ամեն մի առանձին բանվորի, պետք և ավելի բարձրացնել արտադրանքի նորմաները:

Սակայն միայն այդ բարձրացումը կատարելով, շատ բան անել չի կարելի: Մետաղագործական, մանաժագործական, ռետինի, լուցկու, պոլիգրաֆիկական և ծխախոտի արդյունաբերության ձեռնարկություններում ՀԱՄԿԽ-ի կատարած հետազոտությունները, ինչպես տեղերի աշխատողների վկայությունները մատնանշում են, վոր այդ ձեռնարկությունների բանվորներն ամբողջությամբ առաջ՝ նույնպիսի լարվածությամբ են աշխատում, ինչպես վոր մինչև պատերազմը: ՀԱՄԿԽ-ն նույն նյութերի հիման վրա մինչհեղափոխական ժամանակ բանվորը տարեկան աշխատում եր 250,7 որ, իսկ 1923 թվի աշխատանքի որերի քառակը հավասար եր 265,7: 1921 թ. հանդեպ 1923 թ. կամայական բացակայությունների քանակը համարյա յերեք անգամ կրճատվեց—33,6 որից հասավ 13,2 որի: Ամեն տեսակ ժողովների, հասարակական-քաղաքական աշխատանքի վրա բանվորը 1921 թ. ծախսում եր—9,3 որ, իսկ 1923 թ.—ընդամենը 1,5 որ, այսինքն՝ 6 անգամ ավելի քիչ: Վերջապես՝ հիմնդության պատճառով յեղած բացակայությունները (ներառյալ ծննդաբերությունը, հիվանդության պատճառով վերցրած արձակուրդները և այլն) 1923 թվին կրճատվեցին, հասնելով 14,1 որի, հանդեպ 1921 թվի 18,3:

Ճիշտ ե, այստեղ ահճրաժեշտ ե վերապահություն անել, վոր ՀԱՄԿԽ-ի հետազոտությունն ընդդրկում եր ձեռնարկությունների վոչ բավականաչափ լայն ըրջան և նրա արդյունքներն ընդհանրապես ու ամբողջությամբ առաջ՝ չել կարելի մեր ոմբողջ Միության համար հաստատված ճանաչել: Մասնավորապես կամայական բացակայությունների քանակը շատ արտադրությունների մեջ գեռ մեծ ե և յեթե մենք այստեղ վորոշ հետեւ վանքների հասել ենք 1921 թվի համեմատությամբ, ապա այնուամենային հարկավոր չեմուանալ, վոր 1921 թիվն ավելիմունքի տարի յեր, մի տարի, վոր նշանակալի չափով հետ եր մնում նախապատերազմական մակարդակից: Իսկ այդ մակարդակին հասնելու համար մենք դեռ ահապին ջանք ունենք թափելու:

Ընկեր կույրեցմի բերած ավյաներից բացի, իմաստ բնորոշ են նաև ընկ. կամենեվի թվերը—այսպես, Լենինդրագի 15 խոչըր ձեռնարկության մեջ, վորոնք 25,000 բանվոր են ընդդրկում, այսինքն՝ Լենինդրագի ամբողջ արդյունաբերության 23 տոկոսը. բանվորների ստացած դուրս աշխատավարձը հավասար է նախա-

սպատերազմականի 99 տոկոսին, իսկ աշխատանքի արտադրողականության — 73 տոկոսին: Գլավմետալի (Գոմզա, Լենինմաշ, Յուժաշաշ) խոշորագույն ձեռնարկությունների մեջ 1923 թվին մշակված է 65 միլիոն պրոդուկցիա 80,000 բանվորով, իսկ 1913 թ. — 173 միլ., 99,000 բանվորով:

Անկառած այստեղ մինչև այժմ քիչ զեր չեն խաղում պատմաներ, վորոնք հենց բանվորից են կախված, և ամենից առաջ բանվորական որի սխալ ոգուագրությունը, անբավարար բենակուրումը:

Մեզ մոտ, Թորհրդային Ռուսաստանում 8-ժամյա բանվորական որ է մտցրած: Արևմուտքի բոլոր յերկրներում բանվորական որի կրճատումը միշտ բարերար աղղեցություն և ունեցել բանվորի վրա և անհապաղ բարձրացել է նրա աշխատանքի արտադրողականությունը: Այսպես, որինակ, Վերին Սիլեզիայի գերմանական մասում քարածխային արդյունաբերության մեջ մեկ բանվորի մեկ ժամի գործածը 1919 թ. հունվարին 112-114 կիլոգրամմ ածուխ էր, բայց ահա ողոսուսին բանվորական որը կարճացրին մինչև 7 և կես ժամ, և արդեն հետեւալ ամիսներում (սեպտեմբեր-դեկտեմբեր) ածուխի մեկ ժամվաք արդյունահանությունը հասույ 144-147 կիլոգրամի: Իսկ մեզ մոտ, յերբ նախահեղափոխական ժամանակ որական աշխատում եյին 9-10-11 ժամ, այժմ՝ 8-ժամյա բանվորական որվա ժամանակ աշխատանքի արտադրականությունը բանվականաշափ չի աճում:

Իսկ ի՞նչումն է բանը: Հենց նրանումն, վոր մեզ մոտ, ձեռնարկությունների մի նշանակալի մասի մեջ, ըստ եյության դեռ 8-ժամյա բանվորական որ չկա, այլ 7-ժամյա, վեց-ժամյա ու նույնիսկ ավելի ցած: Բանվորներն աշխատանքի յեն դալիս 15 րոպե ուշ, փաստապես աշխատանքը ընդհատում են սուլիչից քառորդ ժամ առաջ, աշխատանքի ժամանակ հաճախ գործը թողնում են, սկսում են զրույցներ, «դադարներ», մի ավելորդ անգամ, առանց հատուկ հարկավորության գործարանային կոմիտե յեն վաղում և այն, իսկ արտադրությունը և բանվորական սկսությունը, մեկ ել տեսնես, մի քանի հազար աշխատանքային ժամեր կորցրին: Բանվորի աշխատանքի լարվածությունը մեր ձեռնարկությունների նշանակալի մասում մինչև այժմ ընդհանրապես ու ամբողջովին առած դեռ հետ և մնում և անհրաժեշտ չարձրացունել այն:

Սակայն սետք է լավ հիշել, վոր յեթե մյուս ծայրահեղության

մեջ ընկնենք, լավ չը քննենք և մտցնենք, որինակ, արտադրանքի շափաղանց բարձր նորմաներ, ապա այդ ծանր կանգրագառնարանների առողջության վրա, բանվորը հալից կնկնի:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒ-  
ՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.**

Բանվորի աշխատանքի լարվածում—  
թյունը բարձրացնելու գործում—  
նորմաների բարձրացում, կոիլ կա-  
մայական բացակայությունների, ուշացումների դեմ և այլն, մեր  
արհմիությունները վերջին ժամանակներս մեծ հաջողությունների  
յին հասել, Այսպես, կամպանիայի սկսելու մոմենտից (1924 թ.  
սեպտեմբերից) մինչև 1925 թ. հունվարը ներառյալ, մեկ բանվորի  
աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 31 տոկոսով, մինչդեռ այդ նույն շրջանում աշխատավարձի աճումը վոչ միայն կանգնեց, այլև մի քիչ ել իջավ—1,2 տոկոս. (ՀԱՄԿԸ 2-րդ նստա-  
ցրջանի նյութերը): Փետրվարը և մարտը այդ գրությունը չփո-  
խեցին, աշխատանքի արտադրողականությունը շարունակում է  
բարձրանալ, իսկ աշխատավարձի բարձրացում չկա: Իսկ յեթե հա-  
մեմատենք 1923 թ. հոկտեմբերի և 1925 թ. հունվարի տվյալները,  
ապա կը տեսնենք աշխատավարձի բարձրացումը 27,2 տոկոս, իսկ  
աշխատանքի արտադրողականությունը—53 տոկոս:

Ի՞նչպես հաջողվեց կարճ ժամանակամիջոցում աշխատանքի  
արտադրողականության բարձրացման գործում այսքան նշանակա-  
լի արդյունքների հասնել: Հաջողության գլխավոր պատճառն այն  
է, վոր միությունները կարողացան վերացնել այն պայմանների  
մեծ մասը, վորոնք խանգարում ենին արտադրության կանոնավոր  
ընթացքին և փորձն մեղքը բանվորի վրա յեր ընկնում: Բանվորա-  
կան որը խտացած է, միջին հաջողված արտադրանքի նորմաները վոչ  
պակաս քան 15–18 տոկոս բարձրացված են, իսկ մի քանի գեղքերում  
ել ավելի շատ (25–28 տոկ.), համապատասխան չափով ցածանում  
երին գնահատումները (ՀԱՄԿԸ յերկրորդ նստացրջանի նյութերը):

Հնդհանուր առմամբ ներկայումս մեր ձեռնարկությունների  
մեծամասնության բանվորներն իրենց ուժերը լարում են վոչ պա-  
կաս, քան նախապատերազմական ժամանակ: Բայց դժբախտու-  
թյունն այն է, վոր ձեռնարկության մեջ ամբողջ արտադրությունը  
հանալի վատ ե վարդում, բավականաչափ լավ չի կազմակերպված  
այն: Քիչ ե բաց թողնվող ապրանքների քանակը մեծացնել բանվո-  
րի ուժերի ծախսումը մեծացնելու միջոցով, պետք ե կարողանալ  
կարգի պցել արտադրությունը, նրա վորակն այնպես լավացնել,

վորպեսզի կարելի լինի լավ հետեւանքների համել ուժերի ավելի քիչ ծախսումով։ Այդ ել աշխատանքի արտադրողականության իսպիչ ծախսումով։ Այդ ել աշխատանքի կը լինի, զբա մեջ և այժմ հարցի մեխը։ կական բարձրացում կը լինի, զբա մեջ և այժմ հարցի մեխը։

Վերցնենք այսպիսի մոմենտ ողատեղամի մեջ, որինակ, յենթասպաների լավ կազմը բանակի հաղթանակի համար ահապին նշանակություն ունի։ Եռույնպես հարկավոր և, վոր մենք հատուկուշագրություն զարձնենք մեր արդյունաբերության յենթասպանական կազմի, ստորին տեխնիկական պերսոնալի և վարչության հմուտ ընտրության վրա։ Մենք պետք են հատուկ խնամքով ըստ բնական ֆրոնտի բոլոր հրամանատարներին, մեր ձեռնարկությունների ամերող վարչությունը և տեխնիկական պերսոնալը։

Ապա, բանվորական որվա բավական (այսինքն ամենահեշտ և լրիվ) ողտագործումը յերկու հանգամանքից և կախված մի կողմից հենց բանվորի աշխատանքային դիսցիպլինարից կարգապահությունից) ուշացումների, կամայական բացակայությունների և այլն վերացում), իսկ մյուս կողմից, նաև ձեռնարկության վարչության հմտությունից, ինչպես հարկն է կարգի գցելու արտադրության նորմալ ընթացքը։ Յեթե, որինակ, համբարային վարպետները չեն կարողանում նպատակահարմար բաշխել աշխատանքը, այն ժամանակ դադարացներն անփորձ կանգնում են, բանվորները շահ ժամ պարապ այս ու այն կողմն են ընկնում։ Կարգի չի գցված ձեռնարկության պահեստի ապագարատը, յենթադրենք վորեե գործիքի համար հում նյութը պակասում են, նորից ժամներ են անցնում, մինչև հաջողվում և պահանջվածը ստանալ, իսկ այդ միջոցին զագդահաները նորից կանգնած են մեռում։ Զեռնարկության հում նյութ են բերում, վարչությունը առանց քննելու ընկանություն է այն։ Բայց յերբ հում նյութը գործածել են սկսում, տեսնում են, վոր նրա մեջ մասը վատորակ են, անպիտումի յե յենթակա 20-40 տոկ։ և նորից արտադրությունը տուժում է։ Կամ ձեռնարկությունը յեթե ճեռք բերի վատ գործիքներ, նորից անպիտումի յենթակա արդյունքների տոկում կը մեծանա։

Մեր գեուս աղքատ արդյունքներությունը շարունակի վիճակի չե հարցուր հազարավոր սուրբիներ ծախսել նոր մեքնաների վրա, զբա համար ավելի ևս հարկավոր և, ինչքան կարելի յե ավելի լավ ողտագործել այն, ինչ մենք ձեռքի տակ ունենք, ողտագործել մեր նյութական միջոցները, մեր ուժերը։ Յերբեմն հնարագետ-բանավոր ինքնուսը, վոր իր խորհրդային արտադրության բոլոր կա-

րիքների մասին հոգս և քաջում, հնարում և, որինակ, վառելու կամ շարժիչի նոր սիստեմ, վոր տասնյակ տոկոսներով քչացնում և պահանջվող վառելիքի քանակը կամ միջոց և գտնում, վորով հնարավոր և գառնում իբրև վառելիք ոգտագործել հենց արտադրության դեն դցելու նյութերը (որինակ՝ կաշու գործարաններում ոգտագործել զարագած կաշու մնացորդները), այդ դեպքերում տասնյակ հանձնաժողովներ են ստեղծում, ծանոթանում են նրա գյուտին, խրախոսում են այն և . . . մոռացության մատնում: Այն ել եւ լինում, վոր տնտեսական որդանը բանվոր-հնարագետի հետ ամենսին խոսել ել չի ուզում: Մինչդեռ ամեն մի այսպիսի լավացում, վոր դրսից աննկատելի յե, կարող է բանվորական պիտության համար հարյուր հաղարավոր ոռութիւն խնայել:

Արդյոք գործարանի վարչությունը ինքը կուվո՞ւմ է վառելիքի ավել այրման դեմ, արդյոք ամեն բան անո՞ւմ է, վորպեսզի ալելի թանկ փայտի վառելիքից անցնեն ածուխին, նավթին, վերջապես ելեքտրականության: Ու արդյոք ամեն բան արե՞լ ե նյութերի տրնտեսության համար:

Ապա խիստ կարենոր դեր է խաղում արտադրության կոնցենտրացիայի (համակենտրոնացման) աստիճանը: Որինակ՝ առնենք վորեւ մետաղագործական տրեստ, յինթալրենք նրա մեջ մանում են 10 գործարան, իսկ նրանք բոլորը աշխատում են ընդամենը 15–20 տոկոս բեռնումով: Գործարանում ոժանդակ բանվորները—հատկապես ծառայողները, տնորենները հաշվապահները և այլն—յերկու անգամ ավելի յեն, քան նախապատերազմական ժամանակ: Հասկանալի յե, վոր մետաղագործական առարկաները յեռապատիկ թանկ կը լինեն և գյուղացին չի մոռենա նրանց: Ի՞նչ պետք ե անել: Համակենտրոնացնել արտադրությունը, այսինքն բանացնել միայն ավելի լավ սարքավորված 4–5 գործարան, բայց դրա փոխարեն այդ ընտիր ձեռնարկությունները բեռնել 100 տոկոս պատվերներով, իսկ ոժանդակ բանվորների և ծառայողների շտատները ըստ հնարավորին սեղմել: Այն ժամանակ վերադիր ծախքերն ել կը քչանան և գյուղ կը դնա եժան ու միենույն ժամանակ լավ վորակի ապրանք:

Բայց յեթե նույնիսկ կոնցենտրացիան (արտադրության համակենտրոնացումը) վերջացվի, այդ դեռ բավական չե: Պետք ե պատվերներն ըստ գործարանների այնպես բաշխել, վորպեսզի ամեն մեկին ընկնի նրա հզորությանը համապատասխան աշխատանք, նույնպես և համապատասխան նրա մասնագիտության, վորպեսզի,

որինակ, ումոնտի գործարանում 500 մարդ պակաս չկնի, իսկ բարի գործարանում 200 մարդ ավել, վորպեսդի ումոնտի գործարանը իրոք ումոնտ անի և վոչ թի լար պատրաստի, իսկ լարի գործարանը մեխ և լար շինի և վոչ թի զբաղվի ումոնտով կամ պայտ ու ամանեղեն պատրաստէով:

Արտադրության հաջող աճման համար դրանից բացի անհրաժեշտ է հաջող վաճառահամեռություն: Վատ կը լինի, յեթե տրեստները հոգ շտանեն առաջին հերթին շուկա հանելու հիմնական, ամենից վարուն (հօդքայ) ապրանքները, վորոնց մասսայական պահանջը կա թե դյուրում և թե քաղաքում: —որինակ՝ յեթե մետաղադրական տրեստը մեխերի, պայտերի, դույլերի, լարերի և այլն փոխարեն յեռանդադին զբաղվի միայն տասնորդական կը շեռքների և ջրաշալիքների, իսկ մանածագործական տրեստը չթերի և քայլանի փոխարեն՝ նուրբ մահուրդների գործածով:

Յեկ վերջապես տրեստը պետք է ամենայն ուշադրությամբ հետեւ, վորպեսդի պատրաստ չիթք կամ դույլը մինչև գնողին հասնելը վերադիր առտերական ծախքերի ահազդին տոկոսներով նորից չթանկանան:

Հատկապես պետք է կովել մանրածախս դների բարձրացման դեմ: Մեր ապրանքների մանրածախս գները մեծածախսից ամբողջ 30-33 տոկ. բարձր են (1924 թ. աշնանը): Այդ նոր առետրական «մկրատը» ինչ կերպ ել վոր լինի, անհրաժեշտ է սեղմել:

Յեթե այդ բոլորը կամարդի, յերե բանվորների աշխատանքի լարվածության մեծացմանը ավելացվի ինեց արտադրության լավագույն կազմակերպումը—բանվորական որվա լրիվ բեռնումը, տեխնիկական սարքավորման և աշխատանքի բոլոր ձեռերի լավացումը, լավ հում նյութի լնոտրանքը, վատելիքի տնտեսությունը, արտադրության կոնցենտրացիան և ձեռնարկությունների լրիվ բեռնումը, ոժանդակ բանվորների շտատի կրնատումը և այլն և այլն, —ապա այն ժամանակ կատարվի բանվորի արտադրանքի ամենաբարձր չափը, արդյունաբերության բարձրագույն արտադրության մեջ կանոնադր և ապրանքների գնի և ժամանացումը, այսինքն հենց այն, ինչ վոր մեղ պետք է: Յեկ այդ արտադրադականության վերելքին անհրաժեշտ է հասնել վոչ միայն խոշոր և լուրջ միջոցներով, ասենք, գործարանը վերասարաթալորելով և այլն, —այլն անդադար ուշադրություն դարձնելով գործարանային արտադրական կան կենցաղի ամեն մի մանրունքին, պակասող ամեն մի չնիքն գործածած հում նյութի կամ վառելիքի ամեն մի փթին: Այսպիսի

ժամանակին նկատած ամեն մի մանրունքից մի ալելորդ աղյուս և ստացվում մեր խորհրդային արտադրության հմքը կառուցելու համար :

### ՆՈՏ-Բ ՌՈՒՍՍԱՑԱՆՈՒՄ ՅԵՎ ԱՐԵՎՄԱՆԻՑՔՈՒՄ

Հենց արտադրության ռացիոնա-  
թեվ լիզացիայի (լավացման), նույնպես  
և աշխատանքի լարվածության

բարձրացման միջոցով աշխատանքի արտադրողականության բարձ-  
րացման համեմ, նյանակում և, մտյնել աշխատանքի գիտական  
կազմակերպում, ՆՈՏ :

ՆՈՏ-ի իրականացման կոիվը տեղի յե ունենում վոչ միայն  
Ռուսաստանում, այլև Արևմուտքում, սակայն ՆՈՏ-ի եյությու-  
նը կապիտալիստական յերկրներում խորապես զանազանվում և  
ԽՍՀՄ ՆՈՏ-ի եյությունից : Արևմուտքում ՆՈՏ-ի հասկացողու-  
թյունը կապում են ամերիկացի միջներ ֆորդի անվան հետ,  
վորը կարողացավ հիանալի կաղմակերպել ու սարքավորել իր  
ավտոմոբիլային գործարանները, ինչիներ Տայլորի անվան հետ,  
վոր կարողացավ հիանալի կարգի գցել գործարանի տնտեսու-  
թյունը աշխատանքի հետ և խոր բաժանման, ամբողջ աշխատան-  
քի, նյութերի և առարկաների կարտով հաշվեառման միջոցով,  
շնչերի, դաղդահների, նյութերի, գործիքների և այլն լավա-  
գույն և տնտեսարար դասավորումավ : Սակայն Արևմուտքում  
ՆՈՏ-ի աշխատանքի ծանրության կենտրոնն այն չե, վոր ինչքան  
կարելի յե լավ կազմակերպի արտադրությունը, այլ այն, վոր  
ինչքան կարելի յե շատ բարձրացվի բանվորի աշխատանքի լար-  
վածությունը, ինչքան կարելի յե նրանից ավելի շատ հյութեր  
բամբի : Նույն այդ Տայլորը ընտրում եր ամենաուժեղ և փորձ-  
ված բանվորներին և բավական բարդ, իսկ հաճախ խորամանկ  
յեղանակներով հարկադրում ե նրանց սովորականից 2 և 3 անգամ  
ավելի մեծ նորմա կատարել : Ապա այդ նորման հաստատված եր  
հայտարարվում մնացած բոլոր բանվորների համար և վերջիննե-  
րը իրոք վոր ստիպված ելին հալից ընկնել, վորապեսպի կարողա-  
նային կետարքը (ցրօք), գործի վորոշ քանակը կատարել : Կե-  
տարքը չկատարելիս բանվորն աշխատավարձ եր ստանում հատուկ  
քչացրած կոպարով և այդ սպառնառով ինքն իրեն հալից գցում  
եր, հաճախ գերեղման հացնում : Եժան բանվորական ուժի յե-  
ռանդուն շահագործումը, կապիտալիստաների մի նշանակալի մա-

սի կարծիքով, նրանց համար ավելի ողտակար է, քան ձեռնարկությունների թանկ նստող վերասարգավորումը: Բացի այդ, կապիտալիստական հասարակության մեջ տիրում է արտադրության անարխիան, ամեն մի կազմություն կամ ամեն մի տրեստու սինդրիկատ ինքն է հաստատում իր համար ապրանքների արտադրության և վաճառահանության պլան, ամեն մի տրեստ կամ սինդրիկատ ատամ և սրում իր հակառակորդի՝ մրցակցի դեմ: Այդ պատճառով հարկ չկա սպասելու, վոր վորեւ կապիտալիստական յերկիր վճռի կազմակերպված ձեռվ, ամբողջ սկսության սահմաններում, իրազործել աշխատանքի պետական կազմակերպումը:

Արեւմուտքում աշխատանքի գիտական կազմակերպումը ամբողջ պետության ամրացման, աշխատավորների լայն մասսաների բարեկեցության մակարդակը բարձրացնելու խնդիրը չի առաջադրում իրեն, այլ ուղղակի ծառայում է ամենաձեռներեց կապիտալիստների հարատացման գործին։ Այդ պատճառով Արեւմուտքում աշխատանքի գիտական կազմակերպումը անց է կացվում առանց լայն ծրագրի, առանց սիստեմի, նա վոչ միայն չի ձգտում պաշտպաննել բանվորի առողջությունն ու կյանքը ուժից վեր լարումից, այլ ընդհակառակը գիտակցարար ձգտում է, ինչ գնով ել վոր լինի, այդպիսի լարվածության հասնել։ Իսկ յեթե ժամանակից առաջ բանվորը քայլայվի, խեղանուամ կամ ինվալիդ դառնա դժբախտ պատահարից կամ աշխատանքի մեջ կործանվի, նրան փոխարինելու կը գան գործազուրկների ահագին բանակից։

բությունը, բայց մենք վճռականապես դեն ենք շպրտում այն բուլոր յեղանակները, վորոնք բարձրացնում են արտադրությունը ի հաջիվ աշխատավորների առողջության քայլքայման և կյանքի կրծամագան։ Այդ քիչ և, մեզնում, աշխատանքի գիտական կաղմակերպությունը կառուցվում և ամենից առաջ բանվոր դասակարգի լայն շերտների մասնակցության և ինքնուրույնության հիման վրա<sup>4)</sup>։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱ-  
ԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒ-  
ՄԸ ՑԵՎ ԱՐՀԱՄԻԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ  
Ճիշտ այդպես ել մեր տնտեսա-  
կան որդանները կարող են աշխա-  
տանքի արտադրողականության  
բարձրացման ամբողջ հսկա աշխա-  
տանքն իրավործել միայն լայն բան-  
գորական մասսայի ու ամենից առաջ նրա միութենական կազմա-  
կերպությունների հետ սերտ կապ պահելով, իսկ տեղերում—գոր-  
ծարկումների հետ։ Միությունները պետք է ձգտեն տնտեսական  
որդանների հետ գործնական կապն ամրապնդել։ Միություններն  
իրենց նիստերում և ընդհանուր ժողովներում լսում են նրանց զե-  
կուցումները, ֆնության յեն առնում հաշվետվությունները, մաս-  
նակցում են տնտեսական որդանների գումարած տեխնիկական խոր-  
խըրդակցություններին, ստանում են տնտեսական որդանների բո-  
լոր հաշվետու և պերսպեկտիվային (ապագայի համար ծրագրած)  
նյութերի պատճենները և քննության են առնում։ Տնտեսական որ-  
գանը չի կարող բանվորական միությունից վոչ մի այսպիս կոչ-  
ված առևտրական գաղտնիք ունենալ։ Բանվոր մասսան պետք է շա-  
րունակ իմանա ձեռնարկության գործերի իսկական դրությունը,  
վորովհետեւ խորհրդային պետությունը միայն նրա գիտակից մաս-  
նակցությամբ ու աջակցությամբ կը հաջողվի յերկրի տնտեսական  
կյանքը վերածնել։ Բայց, իհարկե, թե տնտեսական օրդանները և  
թե միությունները պետք է թագյունն այդ առևտրական գաղտնիքը  
այսպիսի անձերից, վորոնք կարող են ոգտադրել այն ի վեաս  
բանվորական պետության (արևմտյան բուրժուազիայի տնտեսա-

<sup>4)</sup>) Տեղի պակասը թույլ չի տալիս, վոր հեղինակը ավելի  
մանրամասն կանդ առնի աշխատանքի կազմակերպության  
հարցերի վրա։ ՆԱՏ-ով հետաքրքրվողներին հանձնարարում  
ենք այս դիմի վերջում բերված գրականությունը։

կան լրտեսներից, նեպմաններից և մասնավոր փոքր տնտեսատերերից և այլն) :

Արհմիություններն արտադրության լավացման գործնական աշխատանքը վարում են բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատի հետ սերտ կապ պահելով, իսկ դրա համար «գործարկումներին կից գոյություն ունեցող հանձնաժողով՝ ների կողքին՝ խոշոր ձեռնարկությունների մեջ կարող են ստեղծվել ա) արտադրության, բ) առևտուրի, գ) բնակարանի և կենցազի հանձնաժողովներ : Այդ հանձնաժողովներն իրենց մշտական ընթացիկ աշխատանքը կատարելու հետ միասին, հատուկ առաջարրություններ են ստանում Բանգյուղահաջությունից, ինչպես և ձեռնարկություններում գոյություն ունեցող աշխատանքի պաշտպանության հանձնաժողովները» : (ՀԱՄԿ և ԲԴՏԺԿ շրջաբերականը) : Այս վերջին յերկու հանձնաժողովները միայն ստեղծվում են խոչոր ձեռնարկությունների մեջ :

Սակայն չի կարելի միայն 5-6 մարդուց կազմված հանձնաժողովներով սահմանափակվել<sup>9)</sup> : Միությունների տեսհսական աշխատանքը միայն այն ժամանակ նպատակին կը հասնի, յեթէ նրա մեջ զրավվի ձեռնարկությունների բանվորների լայն մասսան և յեթէ այդ աշխատանքը դրա հետ միասին կատարվի վոչ թե ազատ ժամերին, այլ լրջությամբ ըստ հաստատուն, մտածված ծրագրի :

<sup>9)</sup> Բայ նույն շրջաբերականի «արտադրական հանձնաժողովի նպատակն և ուսումնասիրել ձեռնարկության արտադրական-տնտեսեական և կառավարման զործունեյության դրական և բացասական կազմերը, մասնակցել արտադրական խորհրդակցությունների աշխատանքի զեկավարման և գործի լավացման համար կոնկրետ առաջարկների մշակմանը» : ՆՈՃ-ի հանձնաժողովամանակի լիգա»-յի բջիջները և այլն վորոնք այդպիսի խորհրդներ են առաջադրում իրենց, ձուլվում են գործարկոմին կից արտադրական հանձնաժողովին : Գործարկումներին կից առևտրական հանձնաժողովը ոգնում և «պետվաճառականներին» հարվածել մասնավոր մանրավաճառին, նա, որինակ կարող ե բոլիոտ հայտարարել ամենաչարամիտ մասնավոր «կաշի վերթողներին», վորոնք առևտուր են անում այն ուայնում, ուր աշխատում կամ ապրում են զործարանի բանվորները : Ետամեն կերպ հսկում ե, վորպեսզի բանվորական կոոպերացիան

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՄԴԱԿ-  
ՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ :

Բանվորների այդպիսի մասսայա-  
մունքի մեջ պետք է արտադրական բջիջ ստեղծվի, զոր պիտի  
կազմվի համքարության պատգամավորներից և առանձին վորակ-  
յալ ու արտագրության զրությամբ հետաքրքրվող բանվորներից :  
Բջիջի կազմի մեջ պետք և մտնի նաև համքարության վարպետը :  
Այդպիսի արտադրական բջիջը քննության և առնում աշխատան-  
քը դնելու լավացման յեղանակները իր սեփական համքարության  
մեջ՝ արդյոք բավական և արդյոք ճիշտ և կազմած շտատը, ար-  
դյոք կարգին են գործիքները, արդյոք հարկավոր չե փոխել կամ  
վերասարքավորել մեքենաները, ի՞նչ զրության մեջ և վառելիքի  
գործը և այլն :

Համքարությունից պետք է անցնել ամբողջ գործարանի հոգա-  
տարությունը :

Ամբողջ գործարանի ակտիվի ժաղավը գործարանային կոմի-  
տեյի և գործարանային վարչության հետ կազմում և համագործա-  
րանային արտադրական խորհրդակցությունը :

Լավ հիմքերի վրա զրած արտադրական խորհրդակցությունը  
հարուստ արդյունքներ և տալիս : Խորհրդակցության մեջ զեկու-  
ցում ավող գործարանային ինժեները հաճախ խիստ նեղն և ընկ-  
նում : Այստեղ հաճախ գաժան քննադատություն և լավում, քննու-  
թյանը մասնակցում և գործարանի արտադրական վարպետայի ծա-  
ղիկը, բարգմանյա ստաժով բարձր վարակյալ բանվորները, վո-

---

աճի և արմատանա, բաց թողնի վարուն ( խօնայ ) , լավ և  
եժան արդյունքներ և ճիշտ հողի վրա դնի բանվորական վար-  
կավորման գործը : Քիչ աշխատանք չըւնի նաև թիմականային  
հարցի և կենցաղի հանձնաժողովը : Նա ոգնում և ավյալ ճեռ-  
նարկության բանվորների համար բնակարաններ կառուցելուն,  
այդ բնակարաններն առաջապահական դրության մեջ պահե-  
լու, ուստինական խորհրդի հետ համաձայնության գալով շրջա-  
կա ուստինական բնակելի տարածության ճիշտ բաշխման վրա  
հսկելուն, ինչպես և հնարավոր միջոցներ ձեռք առնելուն, զոր  
բանվորների կոմմունալ և այլ ծառայություններով ( ճաշարան,  
լվացքատուն ) սպասարկումը լավանա » :

բոնք հիմնովին ծանոթ են ամեն մի պառատակին, ձեռնարկության ամբողջ ահագին որդանիզմի ամեն մի տուանձնահատկությանը:

— Պահեստներում ածուխը պահպում և ուղղակի հողի հատակի վրա, դրա չնորհիվ մեծ շափով թափթփում և ու փշանում:

— Գործիքը վատ է, պողպատը վասփուկ է, մենք եւ գործիքը անդղուչորեն ենք գործածում: Դրա չնորհիվ մեծ շափով և կոտրվում և վերադիր ծախսերը աճում են:

— Դազգահը մի ժամ աշխատում է, իսկ յերկու ժամ կանգանում: Թերթերը աշխատանքի ժամանակ են հանձնվում: Դրա համարանին մեր պահեստի ապարատը չի շտապում — մինչև նյութերը բերում են, սպասելով հողիդ դուրս և գալիս, իսկ յերրեմն դու ցերեկը ճրագով եւ չես կարող վոչ պետք յեղած նյութը, վոչ եւ գործիքը գտնել:

— Մեր համբարության մեջ անպիտումը շափազանց մեծացել է, հարկավոր և ուժերը լարել, պատճառները գտնել, ուղղել:

— Մենք ամեն ինչ ձեռքով ենք քաշ առալիս, ավելի լավ ու հարմար կը լիներ ունեսեր գցել ու փոքրիկ ապրանքատար վագոններ բանացնել:

— Գութանների կալիուլացիան կարծեք թէ ճիշտ չե, վառելիքի ու ամորտիդացիայի (չիջուցման) ծախքերը շատ են ցույց տված:

— Մեր դրասենյակի շտատները փրփել են: Վատ չեր լինել սեղմել: Առանց տնօրինի տեղակալի կարելի յե կառավարվել, սպահցիոնդն եւ հարկավոր և պակասացնել:

Մեկ եւ տեսնես, մի քանի արտադրական խորհրդակցություններից հետո գործը հաջող անցավ: Իրերի արժեքը եժանացավ, աշխատանքի արտադրականությունը բարձրացավ: Յեկ այլ բոլորը չնորհիվ ձեռնարկության միասնական արտադրական կոլլեկտիվի — բաննորների և ծառայողների ու վարչական-տեխնիկական պերսոնալի սերտ կապի, չե՞ վոր վերջններս նույն աշխատավորներն են, վոր դիսավոր անտեսատերի — բանվորա-գյուղացիական պետության լիազորներն են հանդիսանում:

Պրոլետարիատի միլիոնավոր հոգատար ձեռքերով բարձրացվելով, գանդաղ, բայց հաստատ վերածնվում և մեր սոցիալիստական անտեսությունը:

Պետք ե վոչ միայն հաճախակի, վոչ սակավ, որինակ, քան ամիսը մեկ անգամ արտադրական խորհրդակցություններ գու-

ժարել, այլև նրանց քննությանը դնել կոնկերետ, գործնական հարցեր : Պետք է զգուշանալ չափից գուրս շտագողականությունից, թեթևվառլիկությունից, ամեն բան մի անդամից ընդգրկելու ձըդտումից, ամեն բան մի անդամից վերափոխելուց : Արտադրական խորհրդակցությունների համար և ընդհանրապես միությունների տնտեսական աշխատանքի համար հարուստ նյութ կարող ե տալ նույնպես գործարանային վարչության հաշվետվությունների, ծրագրերի և այլ նման նյութերի խնամքով ուսումնասիրությունը : Ինչպես վոր համբարային արտադրական խորհրդակցության աշխատանքը զեկավարում և համբարային-լիտոգորը, այսպես ել համագործարանային արտադրական խորհրդակցության աշխատանքը պետք է զեկավարի գործարանային կոմիտեն : Այս կամ այն շափով խոշոր ձեռնարկությունների մեջ զործարանային կոմիտեն այդ զեկավարությունը իրազործում և արտադրական հանձնուղովների միջոցով : Արտադրական հանձնաժողովը արտադրական խորհրդակցության բյուրոյի գերն և կատարում : Նրա պարտականությունն և խորհրդակցության նիստի որակարգ կազմելը, սուածարկների և նյութերի նախապատրաստելը և արտադրական խորհրդակցությունների վճիռների մշակումը : Արտադրական հանձնաժողովը իր ամբողջ աշխատանքում պետք և սերտ կառու պահճի վոչ միայն գործարանային կոմիտեյի, այլև վերջինիս կից մնացած հանձնաժողովների հետ : Այսպես, որինակ, շատ կարենոր և աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի հետ ունենալիք կապը, վորովհետեւ ինչքան ավելի լավ և դրված աշխատանքի պաշտպանությունը, այնքան ավելի բարձր և արտադրողականությունը : Մյուս կողմից, անսահման գործային սիստեմ մտցնելը, աշխատանքի թափի արագացումը համբարություններում սպառնում և գժրախտ պատահարների թվի մեծացումով և պահճանջում և, վոր աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի աշխատանքը ուժեղանա : Աստ կուլտհանձնաժողովը չափազանց լուրջ խնդիր և կատարում, լայնորեն ծանոթացնելով ձեռնարկության ամբողջ բանվոր մասսային արտադրական խորհրդակցությունների վճիռներին և արդյունքներին և ընդհանրապես աշխատանքի արտադրողականության բարձրացման կամպանիայի ամբողջ ընթացքին :

Ինչքան ել վոր լավ աշխատի արտադրական հանձնաժողովը, այնուամենայնիվ նա չպիտի և իր աշխատանքը գործարանի ամբողջ

ակտիվի աշխատանքի տեղը գնի , իսկ այդ ակտիվը հանդիսանում է համագործարանային արտադրական խորհրդակցությունը : Զբարեալ պետք է կարծել , վոր արտադրության հարցերը պետք են միայն արտադրության խորհրդակցությունների նիստերում զրվեն : Ընդհանուր բնույթի մի շարք հարցեր (տրեսորի , գործարանային վարչության գեկուցումները և այլն) խիստ ողտակար են քննության առնել նույնպես գործարկումի նիստերում , պատգամավորական կոմ բնդհանուր ժողովներում :

Միությունների տնտեսական աշխատանքի չափաղանց կարեւոր կողմն է հանդիսանում խնամքով և իր ժամանակին ստուգել , թե արդյոք կենսագործված են արտադրական խորհրդակցությունների բոլոր վորոշումները :

Արտադրական խորհրդակցության ամեն մի արձանագրություն ուղարկվում է արտադրական հանձնաժողով , իսկ հետո յեղրակացությամբ միասին՝ գործարկում : Գործարկումը հաստատում է արտադրական խորհրդակցությունների վճիռները և համապատասխան յեղրակացություններ և անում : Այսպիսում համարակալ յերկու շաբաթ ժամանակամիջոցում կարգավորել այսինչ համբարությունների լավորակ հումք նյութ և գործիքներ մաստիկարելու հարցը » , « վոչ ուչ 3 շաբթից վերասարքավորել վառելիքի պահպանման չենքը » և այլն : Այս բոլոր յեղրակացությունները գործարանային կոմիտեն ուղարկում են գործարանային վարչությանը , իսկ արդեն նրանց հիման վրա վերջինս համապատասխան միջոցներ և ձեռք առնում գործարանում արտադրության կազմակերպությունը լավացնելու : Ընդամեն , ի հարկե , վոչ արտադրական խորհրդակցությունը , վոչ եւ գործարկումը անմիջականորեն գործարանային վարչության աշխատանքին չեն խառնվում : « Այն գեսքում , յերբ գործարանային վարչությունը գործարանային կոմիտեյի առաջարկներին չեն համաձայնվում , նրանք ուղարկվում են բարձր կանգնած միութենական և տնտեսական որդաններին ի կարգադրություն , վորով չեն կանգնեցվում գործարանային վարչության կարգադրությունները » : (ՀԱՄԿԽ հահանգուլ) : Սակայն , գործարանային կոմիտեն , ինչպես ասում են , հրետավ առաջ ե քում գործարանային վարչությանը :

Արտադրական խորհրդակցությունները միությունների համար կարեւոր են նրանով ել , վոր ողնում են նրանց ճանաչել միությունների ստորին մասսայի այն ամենից ավելի գիտակ ու յեռանգուն

բանվորներին, վորոնց անհրաժեշտ և առաջ քաշել պատասխանատու տնտեսական աշխատանքի : Բանվորների միջից աղմինիստրատոր-տնտեսաբարներ առաջ քաշելը, մեր արևմիությունների կարեոր խնդիրներից մեկն է : Միությունների ամբողջ տնտեսական աշխատանքը կարող է հաջող ճանաչվել այն չափով, ինչ չափով հաջող և առաջ գնում լավագույն գաղղահի բանվորների առաջ քաշումը :

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԵՔԻ  
ՄՆԱՑԱԾ ՇՐՋԱՆՆԵՐԻ :**

Բայց միությունների տնտեսական աշխատանքը միայն արտադրության ըրջանով չի սահմանափակվում — կարեոր և վոչ միայն գործարանից ապրանք բաց թողնել, այլի այնպես վաճառել այն, վորակեսղի սպառողին հասնելու ճանապարհին ապրանքը առետրական ծախքերով խիստ շթանկանա (այս վերաբերում և հատկապես մանրածախսին) : Ապրանքը եժան և արագ հասցնել զնողին, այս ել այն խնդիրներից մեկնելու, վոր միությունները պետք ել լուծեն տնտեսական որդանների հետ միատեղ : Սրա համար (բացի առետրի հանձնաժողովի աշխատանքից) միությունները ակտիվ մասնակցություն են ունենալու ներքառժողկումատի և նրա տեղական որդանների, նույնպես և պետական առետրի բոլոր որդանների աշխատանքին : Մասնավորապես, խորաշխի միությունը լուրջ ու մեծ խնդիր ունի կատարելու մեր կարեորագույն առետրական ապարատի-կոռոպերացիայի լավացման և եժանացման գործում :

Բայց մեր միությունները շահագրսոված են, վոր գործը լավ գրվի վոչ միայն մեկ ձեռնարկության կամ մեկ արտադրության մեջ, այլև նահանգի, յերկրամասի, հանրապետության, վերջապես, ամբողջ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ : Այդ պատճառով միություններն իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցում են նահանգական գործկոմներին կից նահանգական ոլլանային հանձնաժողովներին, նահանգական ժողանախորհների աշխատանքին : Մենք կը գտնենք նրանց նուև միության ամեն մի հանրապետության գետապլանում, Աշխատանքի և Գաշտապանության Խորհրդում, Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդում : Վերջապես, Համամիութենական Արհեստական Միությունների կենտրոնական Խորհրդի (ՀԱՄԿԸ) միջոցով մեր արհեստական միությունները ակտիվ մասնակցում են ԽՍՀՄ Աշխատանքի և

Պաշտպանության լիորհըդի, Համամիութենական Պետականի և  
ԽՍՀՄ ԺՏԳԽ աշխատանքին և այլն։ Այսպես, սկսած ստորին համ-  
բարային արտադրական բջիջից և գործարանային կոմիտեյից և  
վերջացրած ՀՍՄԿԽ ներկայացուցչությամբ համամիութենական  
նշանակություն ունեցող պլանային որդաններում, արհեստակցա-  
կան կազմակերպությունները պրոբռդում են սերտ գործնական  
կազ տնտեսական որդանների հետ, բանվորական պետության որ-  
դանների հետ, կատարում են իրենց հիմնական կոչումը—լինել  
խորհրդային յերկրի ժողովրդական անակության հենարանը՝  
լինել պլոտետարական դիկտատորայի հենարանը։

### ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. ՆԵՊ-ի սկզբում աշխատանքի վարձատրության ի՞նչ ձեւ եք նախորդում հավաքական պայմանագրի մոցնելուն։
2. Ի՞նչու՞ ՆԵՊ-ի պայմաններում միաւթյունները անցան հա-  
վաքական պայմանագրերին։
3. Ի՞նչու՞ կապիտալիստական կարգի ժամանակ միություն-  
ները այնպես համառորեն ձգտում են հավաքական պարմանագրերի  
կնքման։
4. Ի՞նչու՞ հավաքական պայմանագրի համար մզկող կովի կազ-  
մակերպությունը սերտ կապված և ամրող արհեստակցական  
չարժման պատմության հետ։
5. Արդյոք հավաքական պայմանագրի կնքելը արհեստակցա-  
կան միության համար ինքնանպատակ և։
6. Ի՞նչո՞վ և տարբերվում պրոլետարական դիկտատուրայի  
յերկրի հավաքական պայմանագրիը բուրժուական յերկրի հավա-  
քական պայմանագրից։
7. Ի՞նչ տարբերություն կա հավաքական և աշխատանքային  
պայմանագրերի միջին։
8. ԽՍՀՄ մեջ վոր պետական որդանն և պաշտպանում բան-  
գորների շահերը հավաքական պայմանագրի կնքման ժամանակ։
9. Ի՞նչ և ասում Աշխատանքի Բրենսովերը հավաքական պայ-  
մանագրերի մասին։
10. Հավաքական պայմանագրեր կնքելը պարտադիր և ար-  
դյոք ԽՍՀՄ տնտեսական որդանների համար։

11. Վո՞րն ե հավաքական պայմանագիր կնքելու լավագույն կարգը :

12. Ի՞նչ ձևով բանվորական ակումբը կամ կուլտհանձնութեավը կարող են մասսայականացնել կնքված պայմանագիրը :

13. Ի՞նչ ե առում հավաքական պայմանագիրը բանվորների վարձման և արձակման մասին :

14. Ի՞նչ են տարիֆային ցանցը, տարիֆային կարգը, տարի-ֆային կոպարը, տարիֆային ցանցի կոեֆֆիցիենտը :

15. Ի՞նչ տարիֆային ցանց գործություն ունի այժմ և ի՞նչով ե տարրերկում նա սազմական կոմմունիզմի շրջանի տարիֆային ցանցից :

16. Ի՞նչ ե միասնական տարիֆը :

17. Ի՞նչ նշանակություն ուներ իր ժամանակին աշխատավարձի հաշվումը տարանիքային ուռութիւններով :

18. Ի՞նչ ե ժամանակավարձը և ի՞նչ գեղքերում և թույլատրում այն :

19. Ինչու մինչև հեղափոխություն միությունները կովում եյին դորձարքային սիստեմի դեմ, իսկ այժմ անսահման դորձարքային սիստեմ են մացնում :

20. Ի՞նչ գանազանություն կա կասխատալիզմի պայմաններում և պրոլետարական գիհատառություն պայմաններում յեզու դորձարքային սիստեմի միջեւ :

21. Ի՞նչ է արտազրանքի նորման ( норма выработки ) և գործային գնահատումը, ո՞վ և ի՞նչպես և սահմանում այն :

22. Հավաքական պայմանագիրը արտազրանքի ի՞նչ նորմաներ և ի՞նչ ժամկետով և սահմանում :

23. Ի՞նչպես ե սահմանվում այն անձերի գործային գնահատումը, վորոնք կրծատ բանվորական որ են աշխատում :

24. Ի՞նչ է լրացրացիչ վարձատրության սիստեմը և ո՞ւ համար և ժամցում այն :

25. Ի՞նչ ե առում հավաքական պայմանագիրն անպիսամ ( бра кованый ) իրերի վարձատրության մասին :

26. Ի՞նչ ե առօրում հավաքական պայմանագրի մեջ աշխատանքի պաշտպանության, աշկերտության և կուլտ-աշխատանքի մասին :

27. Ի՞նչ ե զնահատու-կոնֆլիկտային հանձնութողովը, ի՞նչ-ունես և կառուցվում նա և ի՞նչ հարցեր ե վճռում :

28. Ի՞նչով պետք է արտահայտվի դործարանալին կռմիտելի զե-  
կավարությունը ԳԱՀ բանվորական մասի վերաբերյալ :

29. Ո՞ւր և հանձնվում կոնֆլիկտը (բնդՀարումը) , յիթե համա-  
ձայնություն չի կայացած :

30. Ի՞նչ տարրերության կա հաշտատար առյանի և իրավա-  
րար դասարանի միջև :

31. Ի՞նչ գեղքերում և բնդունվում պարտադիր իրավարար քըն-  
նություն :

32. Ի՞նչ գեղքերում հավաքական պարմանակը առթիվ ծա-  
գած բնդՀարումները աշխատանքային դասարան ևն հանձնվում :

33. Ի՞նչո՞ւ ԽՍՀՄ Միությանները բայցի տարիքային աշխա-  
տանքից նույնպես անտեսական աշխատանք են կատարում :

34. Արդյոք միությունները անմիջականորեն խօսնվո՞ւմ են  
արտադրության կատավարմանը :

35. Ի՞նչ կապ կա աշխատանքի արտադրողականության բար-  
ձրացման և քաղաքի ու գյուղի միջև միություն հաստատելու  
դորժում :

36. Վորոնք են աշխատանքի արտադրողականությունը բար-  
ձրացնելու յերկու ճանապարհները :

37. Ի՞նչ և աշխատանքի լարվածությունը և ինչպես բարձրաց-  
նել այն :

38. Ի՞նչ և արտադրության բանական կազմակերպությունը և  
ի՞նչպես հասնել նրան :

39. Ի՞նչ և ՆԲՏ-ը : Ի՞նչով և տարրերվում ըստ իր խնդիրների և  
մեթոդների բուրժուական յերկրի ՆԲՏ-ը խորհրդային յերկրի  
ՆԲՏ-ից :

40. Ի՞նչ և միությունների գերն աշխատանքի արտադրողակա-  
նության բարձրացման գործում :

41. Ի՞նչու ձեռնարկության մեջ անտեսական աշխատանքը  
պետք է սկսվի համքարտությունից :

42. Ի՞նչ և համագործարանային արտադրական խորհրդակ-  
ցությունը և ի՞նչ հարցեր պետք ե քննության առնի նա :

43. Ի՞նչպես և գործարանային կամիտեն զեկավարում արտա-  
դրական խորհրդակցության աշխատանքը :

44. Ի՞նչ և զործարանային կոմիտեյի արտադրական հանձնա-  
ժողովը և ի՞նչպես և աշխատում նա :

45. Ինչողիս են կենսագործվում արտադրական խորհրդակցությունների վարույթումները :

46. Ի՞նչ նշանակություն ունի միությունների տնտեսական աշխատանքում բանվորների միջից ազմինիստրատոր—տնտեսաբարեների առաջ քաշումը :

47. Վորոնք են միությունների տնտեսական աշխատանքությունները պետական առենուրբակ կոոպերացիան լավ հիմքերի վրա գնելու գործում :

48. Ինչո՞ւ և ի՞նչ ձեռվան ասմակցում միությունները կԱՀՄ բոլոր պետական պլանային տնտեսական որդունների աշխատանքին :



**ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.**

- Ա. ГУРЕВИЧ—Азбука теории и практики зараб. платы, изд. ВЦСПС.
- Ա. ГУРЕВИЧ—Зарплата прежде и теперь, изд. „Красная Новь“.
- Б. ЛАВИНЦ.—Проблемы зарплаты в СССР, изд. ВЦСПС.
- Н. АНДРЕЕВ—Профсоюзы в 1921—1922 г.г., изд. ВЦСПС
- Ф. РЕВЗИН—Эволюция форм зарплаты, изд. ВЦСПС.
- И. ТРАХТЕНБЕРГ—Коллективный договор, изд. ВССПС.
- Г. ВЕЙНБЕРГ—Что такое тарифная сетка, товарный рубль и т. д., изд. Ленинградского ГСПС.
- Я. КАНТОРОВИЧ—Коллективный договор, изд. Ленинградского ГСПС.
- Ф. ДЗЕРЖИНСКИЙ—Речи о поднятии производительности труда.
- Л. КАМЕНЕВ—Поднятие производительности труда.
- ПУНЯТИН—Фабзавком и производство, изд. МГСПС.

**ՆՈՏ-Ի ՎԵՐԱԲԵՐԴ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.**

- И. М. БУРДЯНСКИЙ—Научная организация труда, изд. „Пребий“.
- Г. БАТКЕР—Почему и как надо поднять производительность труда, изд. ЦУП ВСНХ СССР.
- А.Л. ФРИДРИХ—„Генри Форд“, изд. „Моск. Рабочи“.
- К. КЕКЧЕЕВ—„Жизня Машина“, изд. „Литиг НОТ“.
- КЕРЖЕНЦЕВ—НОТ, научная организация труда (1925 г.).
- СИМОНОВ—Научный метод организации промышленности и труда, изд. „Рабоч. Жизнь“.
- ВАЛЬХЕР—Форд или Маркс, изд. Профинтерна.
- Н. ВИТКЕ—Организация управления и индустриальное развитие, изд. НК РКИ СССР.
- О. ЕРМАНСКИЙ—Научная организация труда и системы Тейлора ГИЗ.



20.	Վիշնեվեցի —	«Աշխատանքի հաշմանդամների ապա-	
		հովագրումը» . . . . .	20
21.	«Կանոնադրության գործարկումներին և տեղկոմներին կից կուլտ-հանձնաժողովովների» . . .		5
22.	«Որբնակելի կանոնադրություն բանակումբի, կարմիր անկյան և Փիդ-կուլտի խմբակի» . . .		25
23.	Սենյուշին —	«Ակումբային տչխատանքի խնդիրնե-	
		րը» . . . . .	30
24.	1. յ ա 2 կ ո : —	«Գողերը» . . . . .	5
25.	»	«Առաջին կարմիր գործը» . . . . .	10
26.	Սպիրամիկի —	«Տուբերկուլյողը» . . . . .	10
27.	«Յելիր պայքարի, ստրուկ գաղութի», (ինսցենիր.) . .		10
28.	«Փոխողնության դանձարկղների կազմակերպման կար-		
		դը» . . . . .	10
29.	8 ա. Ֆինը . —	«Բուռասատանի արհշարժման 20 տա-	
		րին» . . . . .	50
30.	«Պրոֆմիությունը և նրա անդամները», (տպագրվում է)		
31.	Բողինիկելի . —	«Ինչու և ինչպես պետք և ուսում-	
		նասիրել արհշարժումը» . . . . .	20
32.	»	«Բանվորական առաջին միավորումները կապիտալիզմի արշալույսին» . . . . .	20
33.	»	«Ի՞նչպես առաջացան և ինչպես եյին աշխատում տուաջին արհմիությունները» . . . . .	70
34.	»	«Արհեստակց շարժումը մինչև 1914 թ.» . . . . .	30
35.	»	«Արհեստակցական շարժումը համաշ-	
		հասրյախն պատերազմից հետո» . . . . .	30
36.	»	«Արհեստակցական շարժումն մուսա-	
		տանում (1905—25 թ.)» . . . . .	80
37.	»	«Ի՞նչ ե արհեստակց արտադրակ. միությու-	
		նը. Արհմիությունը և կուսակցությունը» . . . . .	15
38.	»	«Ամստերդամ և Մոնկվա» . . . . .	35
39.	»	«Ի՞նչ ե պրոֆմիության կանոնադրությ» . . . . .	55
40.	»	«Ի՞նչ ե հավաքական պայմանագիրը» . . . . .	60
41.	»	«Ի՞նչ ե տալիս բանվ. աշխ. որհնսպիրը» . . . . .	35
42.	»	«Ի՞նչ ե սոց. ապահովագրությունը» . . . . .	40
43.	»	«Աշխատանքները բանակումբում» . . . . .	
44.	»	Պրոֆաշխատանքը գյուղում: . . . . .	30
45.	«Պրոֆ գրադիտության գասագիրք»		

ՄԵՇԱՔԱՆԱԿ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ԶԵՂՋ



99

-200-

1926p.

ԳԻՒՆ Ե 60 ԿՈՎ.

692

878